2011, ՀՈԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 19 (351)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*3 հոկտեմբերի*

### Լիբանանի գործերի ժամանակավոր հավատարմատարին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Լիբանանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Չիադ Աթթալային:

Զրույցի ընթացքում անդրադառնալով Հայաստան-Լիբանան հարաբերություններին՝ Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց, որ դրանք մշտապես աչքի են ընկել իրենց առանձնահատկությամբ: Նորին Սրբությունը նաեւ իր երախտագիտությունն ու գնահատանքը հայտնեց Լիբանանի կառավարությանն ու ժողովրդին՝ թե՛ պատմության ընթացքում եւ թե՛ այսօր եւս հայերի հանդեպ ցուցաբերած բարյացակամ եւ մարդասեր վերաբերմունքի համար:

Իր հերթին Չիադ Աթթալան հավաստիացրեց, որ ամեն ջանք գործադրելու է երկու երկրների հարաբերությունների առավել սերտացման եւ ամրապնդման, ինչպես նաեւ տնտեսական համագործակցության զարգացման ուղղությամբ: Խոսելով Լիբանանի կառուցման գործում լիբանանահայերի մեծ վաստակի մասին՝ պրն Աթթալան հատկապես կարեւորեց հայության գործուն մասնակցությունը Լիբանանի տնտեսական կյանքում:

### Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Սիրիայի Արաբական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Մամուն Հարիրիին:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների միջեւ առկա ջերմ եւ սերտ հարաբերություններին, ինչպես նաեւ Սիրիայում կրոնների համերաշխ գոյակցությանը, որի ականատեսն է եղել հովվապետական իր այցի ընթացքում: Նորին Սրբությունը նաեւ մտահոգություն հայտնեց Սիրիայում տիրող քաղաքական բարդ իրավիճակի համար՝ մաղթելով, որ Աստծո օգնականությամբ Սիրիայի ժողովուրդը հաղթահարի իր առջեւ ծառացած խոչընդոտները:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը, հաջողություն ցանկանալով պրն Հարիրիի դիվանագիտական առաքելությանը, նաեւ մաղթեց, որ խաղաղությունը շուտով վերականգնվի նրա երկրում:

*4 հոկտեմբերի*

### Լիբանանի Հանրապետության խորհրդարանի նախագահին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիբանանի Հանրապետության խորհրդարանի նախագահ Նաբիհ Բըրրիին՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ փոխնախագահ Սամվել Նիկոյանի:

Ողջունելով մեծարգո հյուրին՝ Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների եւ երկրների միջեւ սերտ հարաբերություններին՝ նշելով նաեւ, որ լիբանանահայերը, որպես արժանավոր քաղաքացիներ, մշտապես գնահատվել ու սիրվել են Լիբանանի ժողովրդի ու իշխանությունների կողմից: Նորին Սրբությունը, ի դեմս պրն Նաբիհ Բըրրիի, իր գնահատանքն ու շնորհակալությունը հայտնեց Լիբանանի ժողովրդին՝ Հայոց ցեղասպանության տարիներից ի վեր Լիբանանում հանգրվան գտած հայորդիների հանդեպ ցուցաբերած ջերմ ընդունելության եւ հոգատարության համար: Վեհափառ Հայրապետն իր մասնավոր շնորհակալությունն ուղղեց Լիբանանի կառավարությանը՝ Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման ուղղությամբ լուրջ քայլեր ձեռնարկելու եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում որդեգրած հավասարակշիռ դիրքորոշման համար:

Իր հերթին Լիբանանի Խորհրդարանի նախագահը մեծ գնահատանքով խոսեց Լիբանանի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքում հայ քաղաքացիների ունեցած կարեւոր ներդրման մասին, վերհիշեց նաեւ 1997 թվականի իր այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաեւ միջկրոնական երկխոսության մեջ Հայ Եկեղեցու ներգրավվածության, տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ուղղված կրոնական առաջնորդների համատեղ ջանքերի մասին:

*6 հոկտեմբերի*

### Ֆրանսիայի եւ Հայաստանի նախագահներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Նիկոլա Սարկոզիի եւ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի հետ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով նախագահներին, գոհունակություն հայտնեց երկու դարավոր բարեկամ երկրների ու ժողովուրդների միջեւ ամենաբարձր մակարդակի վրա ձեւավորված հարաբերությունների համար,



որոնք առավել զարգանում, ջերմանում եւ համագործակցության նոր ընդգրկում են ձեռք բերում: Անդրադառնալով երկու ժողովուրդների պատմական կապերին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց հայ ժողովրդի հանդեպ Ֆրանսիայի ժողովրդի եղբայրական սերն ու ջերմությունը, ինչի ականատեսն է եղել Ֆրանսիա կատարած հովվապետական այցերի ընթացքում: *«Ձեր այցը Հայաստան մեր երկիր ուրախությամբ է համակել ինչպես մեր, այնպես եւ մեր ողջ ժողովրդի հոգին: Մեր ժողովուրդը քաջագիտակ է եւ հաղորդ, որ իր կյանքի դժվարին ժամանակներում Ֆրանսիայի ժողովուրդն իր մարդասեր ու արդարասեր էությամբ մշտապես աջակից է եղել իրեն»*,- նշեց Նորին Սրբությունը՝ երախտագիտություն հայտնելով հայ ժողովրդին եւ Հայաստանին ցուցաբերվող զորակցության համար:

Հայոց Հայրապետն օրհնությամբ եւ գնահատանքով ընդգծեց նաեւ Ֆրանսիայի իշխանությունների հոգատար վերաբերմունքը Ֆրանսաբնակ հայորդիների նկատմամբ, ովքեր վերապրելով Հայոց ցեղասպանությունը՝ քրիստոնեական լավատեսությամբ եւ հույսով կարողացան իրենց հոգեւոր-ազգային կյանքը կազմակերպել Ֆրանսիայի մեջ եւ այսօր, որպես արժանավոր քաղաքացիներ, իրենց կարեւոր ծառայությունն են բերում Ֆրանսիայի առաջընթացին ու բարօրությանը:

*«Մեր ժողովուրդն առանձնահատուկ երախտագիտության զգացում ունի հանդեպ Ֆրանսիան եւ նրա ժողովուրդը՝ նաեւ այն զորակցության համար, որ ցուցաբերվում է Ցեղասպանության ահավոր ոճրի ճանաչման եւ դատապարտման գործին, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման ու մեր Արցախի ժողովրդի ազատ ապրելու իրավունքի պաշտպանությանը»*,- ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ շնորհակալություն հայտնելով Ֆրանսիայի նախագահի կողմից այդ ուղղությամբ գործադրվող ջանքերի համար:

*Շարունակությունը՝ էջ 2*

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*6 հոկտեմբերի*

### Ֆրանսիայի եւ Հայաստանի նախագահներին



*Սկիզբը՝ էջ 1*

*«Մեծ պատիվ է Հայաստանում գտնվել՝ վկայելու մեր երկու երկրների բարեկամությունը»*,- իր հերթին ասաց Ֆրանսիայի նախագահը՝ ուրախություն հայտնելով հանդիպման առիթով: Ընդգծելով Հայ Եկեղեցու եւ նրա հովվապետերի դերը հայ ազգի ինքնության ու միասնության պահպանման գործում՝ պրն Նիկոլա Սարկոզին իր հարգանքը հայտնեց Հայ Եկեղեցուն եւ Ամենայն Հայոց Հայրապետին եւ հաջողություններ մաղթեց կարեւոր այդ առաքելության իրագործման մեջ:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր բարեմաղթանքները բերեց Ֆրանսիայի նախագահին եւ հայցեց, որ Բարձրյալ Տերն Իր օրհնության ներքո խաղաղության եւ բարօրության մեջ պահի ու պահպանի երկու ժողովուրդներին ու երկրներին:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետի առաջնորդությամբ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին եւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն այցելեցին Մայր տաճար, եղան տաճարի թանգարանում, ուր նրանց ներկայացվեցին Հայ Եկեղեցու եւ հայ ժողովրդի նվիրական սրբությունները:

## Ընդունելություններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Հոկտեմբերի 9-ին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս Խաչատրյանն ընդունեց **Ռուսաստանի Դաշնության Պետ. Դումայի պատգամավոր, Նոբելյան մրցանակակիր, ակադեմիկոս Ժոռես Ալֆյոռովին:**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից ողջունելով աշխարհահռչակ գիտնականին՝ սրբազան հայրն ուրախություն հայտնեց նրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունելու կապակցությամբ, ինչպես նաեւ գոհունակություն հայտնեց երկու երկրների գիտնականների միջեւ առկա սերտ հարաբերությունների ու գործակցության համար:

Անդրադարձ կատարելով հավատի եւ գիտության փոխհարաբերություններին՝ կարեւորվեց կրոնական գիտելիքների եւ գիտության առաջընթացի ու ձեռքբերումների ներդաշնակ ընկալումը ժամանակակից մարդու կյանքում:

Հանդիպման ավարտին Արշակ սրբազանը, բարձր գնահատելով ֆիզիկայի բնագավառում գիտնականի ունեցած կարեւոր ավանդը, մաղթեց, որ Տերն առավել արդյունավորի նրա գործունեությունը:

Նույն օրն Արշակ սրբազանն ընդունեց նաեւ **Ռուսաստանի Դաշնության Պետրոզավոդսկի քաղաքապետ Նիկոլայ Լեւինի գլխավորած պատվիրակությանը:**

Հանդիպմանը սրբազան հայրը ողջունեց Վաղարշապատի եւ Պետրոզավոդսկի՝ քույր քաղաքների քաղաքապետերի մասնակցությունը քաղաքի օրվա տոնակատարություններին՝ վստահություն հայտնելով, որ դա եւս պիտի նպաստի քաղաքների միջեւ հարաբերությունների եւ համագործակցության առավել սերտացմանն ու զարգացմանը:

Մայր Աթոռի դիվանապետը եւ Պետրոզավոդսկի քաղաքապետն անդրադարձ կատարեցին նաեւ Պետրոզավոդսկի հայկական համայնքի կյանքին ու գործունեությանը:

Հանդիպմանը խոսվեց նաեւ Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների եղբայրական փոխհարաբերությունների մասին:

Իսկ հոկտեմբերի 11-ին ընդունեց **Հայաստանի գրողների միության նախաձեռնությամբ անցկացվող օտարագիր հայ գրողների չորրորդ համաժողովի մասնակիցներին՝ առաջնորդությամբ Գրողների միության նախագահ Լեւոն Անանյանի**:

Սրբազանը, ողջունելով տարբեր երկրներից ժամանած երեք տասնյակից ավելի գրողներին, նրանց փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարեմաղթանքներն ու օրհնությունը, ապա շեշտեց այն հանգամանքը, որ ցանկալի ավանդույթ է դարձել օտարագիր հայ գրողների համախմբումը Հայաստանում, ինչը նպաստում է գրողների փոխճանաչմանն ու շփմանը, անդրադարձավ մտավորականի կարեւոր դերին՝ հայ ինքնության ճանաչման եւ պահպանման գործում: «Մտավորական լինելը ոչ թե որեւէ գործընթացի մեջ ներգրավված լինելն է, այլ կենսակերպ է, կենսակերպ՝ հոգեւոր-բարոյական արժեքների նկատմամբ հավատարմություն դրսեւորելու նախանձախնդրության մեջ»,- մասնավորապես իր խոսքում նշեց Արշակ սրբազանը:

Գրողների անունից Լեւոն Անանյանն իր շնորհակալությունը հայտնեց ջերմ ընդունելության համար:

# «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի սրահների բացումը



photo by Yuri Akulyan

Հոկտեմբերի 8-ին Սրբոց Թարգմանչաց տոնի առիթով տեղի ունեցավ Վիրահայոց թեմի «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի սրահների բացման հանդիսավոր արարողությունը:

«Հայարտան» «Գալուստ Գյուլբենկյան», «Վարդան Ջինիշյան եւ ՀԲԸՄ Վիրտուալ համալսարան», «Արթուր եւ Յուլյա Սահակովներ» սրահների բացման արարողությանը ներկա էին Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը, Վրաստանի նախագահի խորհրդական Վան Բայբուրթյանը, ՀՀ Սփյուռքի նախարարության ԱՊՀ Կովկասի բաժնի վարիչ Տարոն Շաղոյանը, Կենտրոնի կառուցման բարերար Բորիս Սահակովը, «Ջինիշյան հիշատակի» հիմնադրամի Հայաստանի գրասենյակի պատասխանատու Արմեն Հակոբյանը, «ՀԲԸՄ Վիրտուալ համալսարանի» ներկայացուցիչ Դալար Կազանջյանը, Վրաստանում գործող արվեստի եւ գրականության մշակներ, թատերական գործիչներ եւ Թբիլիսիի հայ հասարակության ներկայացուցիչներ:



Շնորհավորանքի եւ ողջույնի խոսքով հանդես եկան Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը եւ ուրիշներ:

Բացման հանդիսությանը ելույթ ունեցան «Հայարտուն» կենտրոնի Ներսես Շնորհալու անվան երգի եւ երաժշտական գործիքների համույթը, լարային քառյակը եւ նորակազմ մանկապատանեկան երգչախումբը:

Արարողության ավարտին օրհնության խոսքով հանդես եկավ թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպս Միրզախանյանը:

Միջոցառումն անցավ ջերմ եւ խանդավառ մթնոլորտում:

1921 թվականին Թբիլիսիում Հովհաննես Թումանյանը հիմնադրում է «Հայարտուն» կենտրոնը, սակայն 1940 թ. դադարեցվում է դրա գործունեությունը: Տասնամյակներ անց Վիրահայոց թեմի նախաձեռնությամբ կառուցված համանուն կենտրոնը ծառայելու է նույն նպատակին:

***Վիրահայոց թեմի մամլո դիվան***

# «Հերման Էհլերս» հիմնադրամի պատվիրակության այցը Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հոկտեմբերի 10-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպս Մանուկյանն ընդունեց Գերմանիայի «Հերման Էհլերս» քաղաքական հիմնադրամի ներկայացուցիչներին: Պատվիրակությունը, որի կազմում ընդգրկված էին նաեւ Գերմանիայի Շլեսվիգ-Հոլշտայն նահանգի մի խումբ պետական գործիչներ, համալսարանի պրոֆեսորներ եւ դպրոցների տնօրեններ, Հայաստան էր ժամանել՝ ծանոթանալու հայ ժողովրդի հոգեւոր ժառանգությանը եւ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դերակատարությանը՝ հայ ժողովրդի ինքնության պահպանման գործում:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից ողջունելով հյուրերին՝ Հովակիմ եպիսկոպոսը հանգամանորեն ներկայացրեց Հայոց Եկեղեցու պատմությունն ու ավանդությունները, Ցեղասպանության եւ խորհրդային տարիներին Եկեղեցու կրած դժվարությունները եւ այսօրվա իր առաքելությունը լիարժեք իրականացնելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերը, հոգեւոր-եկեղեցական կյանքում արձանագրած հաջողությունները ու ձեռքբերումները՝ ընդգծելով, սակայն, որ բազում են ժամանակի մարտահրավերները, եւ դրանց հաղթահարման գործում հոգեւոր սպասավորները բազում անելիքներ ունեն:

Ի պատասխան հյուրերի հարցումների՝ սրբազանն անդրադարձավ նաեւ Հայ Եկեղեցու հարաբերություններին քրիստոնեական այլ Եկեղեցիների հետ:

# Կարգալույծ է հռչակվել Տ. Հակոբ քհն. Չերքեզյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի հոգեւոր սպասավոր Տ. Հակոբ քհն. Չերքեզյանը՝ թեմի առաջնորդ Տ. Աղան արք. Պալիոզյանի եւ թեմական խորհրդի խնդրանքի հիման վրա:

Կարգալույծ հռչակված հոգեւորականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը եւ կկոչվի ավազանի անունով՝ Սարգիս Չերքեզյան:

# Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց ԱՄՆ հայոց Արեւելյան թեմ

Հոկտեմբերի 7-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց ԱՄՆ հայոց Արեւելյան թեմ:

Այցի ընթացքում Նորին Սրբությունը հանդիպումներ կունենա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարների հետ՝ քննարկելու իրենց կողմից ստանձնած Մայր Աթոռի տարբեր ծրագրերի ընթացքը:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում է Մայր Աթոռի միաբան Տ. Արիս աբեղա Շնոյանը:

# Շուխոնց հրաշագործ Ավետարանը տարվեց Օշական

Հոկտեմբերի 8-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնախմբեց Սրբոց Թարգմանչաց հիշատակը:

Այդ առիթով Արագածոտնի թեմի առաջնորդանիստ Օշականի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցվեց ուխտի Պատարագ:

Ավանդույթի համաձայն՝ այդ օրը Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի պահոցից դուրս բերվեց եւ Օշական տարվեց երկու հարյուր տարուց ավելի Աշտարակի սրբություն հանդիսացող, Ս. Ամենափրկիչ եւ Ս. Կարմրավոր եկեղեցիներում երկար ժամանակ հանգրվանած Շուխոնց հրաշագործ Ս. Ավետարանը (1669 թ.), որպեսզի ուխտավոր հայորդիները հնարավորություն ունենան համբուրելու եւ օրհնություն ստանալու այդ Ավետարանից:

*Լրատվական նյութերը ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ*

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԱՀԱՊԵՏ Ա ԵԴԵՍԱՑԻ
## (1691-1705)

*Սկիզբը՝ թիվ 14-18*

Ավետիքը վարում էր խոհեմ եւ խաղաղասեր քաղաքականություն: Հակինթոսի հետ ավելի մտերմացավ Ադրիանուպոլսում: Նա կարողացավ առանց Ֆեյզուլլահի կասկածներն արթնացնելու՝ լատինների հետ կարգավորել հարաբերությունները: Դեսպանն էլ սկսեց վստահել Ավետիքին, որին առաջ որպես լատինների հալածիչ գիտեր: 1702 թվի մարտի 11-ին նա հավաստում է, որ Ավետիքը հայերին խաղաղության հորդորներ է կարդում, իսկ հունիսի 8-ին հայտարարում, որ կաթոլիկների հալածանքը բոլորովին վերջ է գտել: Ավետիքն այդ ամբողջ շրջանում գտնվում էր Ադրիանուպոլսում, որը վերածվել էր փաստական մայրաքաղաքի, քանի որ այստեղ էին սուլթանը, մեծ վեզիրը եւ դենպետը: Նա Կ. Պոլսում փոխանորդ էր նշանակել Հովհաննես Ամասիացի վարդապետին: Այդ օրերին մայրաքաղաք է գալիս Սսի կաթողիկոս Մատթեոս Կեսարացին, որը հայտնի է նաեւ Սարի մականունով: Նա 1694 թվին Կ. Պոլսի պատրիարքությունից անցել էր Սսի կաթողիկոսություն եւ արդեն յոթ տարի պաշտոնավարում էր, երբ



կրկին մեջտեղ ելավ բերիացիների պառակտումը՝ Պետրոս Բերիացու հրահրմամբ: Վերջինս նստեց Բերիայում՝ իբրեւ Սսի հակաթոռ, սակայն Մատթեոսը հանձն չառավ բաժանել կաթողիկոսական իրավասությունը, ինչը եղել էր Խաչատուրի եւ Դավթի միջեւ: Մրցակցին ընկճելու համար նա մայրաքաղաք եկավ, բայց պատրիարքական աթոռի շփոթի պատճառով մեծ արդյունքի չհասավ: Սպասելով հարմար առիթի՝ նա շարունակում էր մնալ Կ. Պոլսում:

Այդ օրերին մայրաքաղաք են գալիս Երուսաղեմի վանքի չորս միաբաններ, որոնց ժողովով քշել էր Մինաս Ամդեցին, որը գրել էր Ավետիքին, որ նրանց շատ ականջ չդնի: Նա ոչինչ չարեց, իսկ չորս միաբանները հրապարակավ սկսեցին Մինաս պատրիարքին մեղադրել զանազան զեղծումների մեջ, թե իբր նա վանքը գցել է պարտքերի տակ, ծախել է կալվածները, իսկ սպասքն ուղարկել է Կ. Պոլիս՝ դրանք դնելով անգլիացի վաճառականի մոտ: Մատթեոսն օգտվեց դրանից եւ իր կողմը գրավեց այդ վարդապետներին, նրանց խոսեցրեց ժողովական հավաքում՝ նպատակ ունենալով տիրել Երուսաղեմի պատրիարքությանը: Քանի որ նա կաթողիկոս էր, ապա Եղիազարի պես կարող էր բարձր դիրքի հասնել:

Ավետիքը վարդապետներին կանչեց Ադրիանուպոլիս եւ նրանց չարախոսությունները հավաքեց: Դրանից հետո նա մի կողմից սաստում էր Մատթեոսին, բայց միաժամանակ կառավարության առաջ բարձրացնում էր Մինասի պաշտոնանկության հարցը: Նա, Ֆեյզուլլահի աջակցությունն ունենալով, կամենում էր ինքը հաջորդել Մինասին՝ առանց հրաժարվելու Կ. Պոլսի պատրիարքությունից: 1702-ի հուլիսի 13-ին տեղի ունեցավ այս երկու աթոռների միացումը: Ավետիքը հասավ իր փառասիրական ձգտումներին, ինչը բնավ չէր բխում Հայոց Եկեղեցու շահերից: Դրան հետեւեցին բազմաթիվ շփոթներ:

Երուսաղեմի աթոռն այդ միացումից մեծապես տուժեց: Դրա հետեւանքով վան-



քի մատակարարությունն անցավ աշխարհիկների ձեռքը: Պաշտոնյան կոչվում էր նազր եւ մյութեւելլի, իսկ երբեմն՝ պապա: Այդ ժամանակ այդ պաշտոնն զբաղեցնում էր հռչակավոր պապա Մինասը: Ավետիքը նրա պաշտոնին չդիպավ եւ իր կողմից նրան փոխանորդ նշանակեց ոմն Կարապետին՝ նազր պաշտոնով, եւ արքունի հրովարտակով ուղարկեց Երուսաղեմ: Նա հանձնարարել էր Կարապետին, որ Մինասի հետ Մինաս վարդապետին բանտարկեն: Ավետիք պատրիարքն էլ գրում է, որ դա արքունի հրովարտակով էր, իսկ ինքը խնդրել է, որ նա վանքում մնա: Կարապետը տեղ հասնելով հրապարակեց հրովարտակները, պաշտոնանկ արեց Մինաս պատրիարքին եւ խիստ քննության ենթարկել տվեց պատրիարքի հաշիվները: Մինաս Ամդեցին պատշաճ բացատրություններ տվեց, այնպես որ նրան մեղավոր ճանաչելու համար նույնիսկ կաթոլիկության կամ ֆրանկության մասին խնդիրները հարթվեցին: Ավետիքը Երուսաղեմ ուղարկեց Հովհաննես Ամասիացուն եւ դատավորին հրաման ուղարկեց, որ նոր եւ խիստ քննություններ կատարվեն: Դատավորը կանչեց այլազգի մեծամեծներին, լատինների, հույների, ասորիների փոխանորդներին, Սբ Հակոբի վանքի միաբաններին, որոնք միաձայն՝ Մինասի համար նպաստավոր վկայություն տվեցին: Դրանց համաձայն՝ վճիռ կայացվեց եւ Կ. Պոլիս ուղարկվեց: Մինասի վիճակը մեղմացավ, բայց պաշտոնանկությունը մնաց: Մատակարարման գործերն անցան նազր Կարապետի, իսկ վանական գործերը՝ վեքիր Հովհաննեսի ձեռքը: Սրանց խնդիրն ամեն գնով գումար ձեռք գցելն էր եւ իրենց գլխավորին հասցնելը: Մինասը մեկ տարի անց՝ 1703 թ. ամռանը, գնաց Կ. Պոլիս՝ փորձելու ինչ-որ բան անել իր եւ պատրիարքության համար:

Ինչ վերաբերում է Ավետիքին, նա համարձակ փորձեց ջնջել Ֆրանկացյալների ձեռնարկը, սակայն մշտապես հաշտարար քաղաքականություն էր վարելում օտարների հետ: Նրա գործունեությունն առաջ բերեց դժգոհություն, եւ չորս անձինք՝ Երեմիա Սահապայանը, Հովհաննես եւ Հարություն Թյուլթելօղլիները եւ Նիկողոս Էսքերօղլին, դիմում գրեցին՝ նրան պաշտոնանկ անելու համար, բայց Ֆեյզուլլահը հենց նրանց թիարանի դատապարտեց: Ավետիքը, Երուսաղեմի պատրիարք դառնալուց շատ չանցած, Ադրիանուպոլսից եկավ մայրաքաղաք, որտեղ Մաքրիհորիա գյուղում նրան մեծ բազմություն դիմավորեց՝ Մատթեոս Սարի կաթողիկոսի գլխավորությամբ: Նա քաղաք եկավ այնպիսի հանդիսավորությամբ, ինչպիսին չէր եղել եւ ոչ մի պատրիարքի ժամանակ: Նրա բացակայության շրջանում թիարանից ազատվել էին ադրիանուպոլսեցի երեք քահանաները: Նրանց ազատվելն Ավետիքը համարում էր իր ծառայությունը, իսկ այլ տեղեկություններով՝ փոխանորդ Ամասիացու: Ավետիքի գալով՝ սրանք սարսափահար փախան Վեղարավոր Ֆրանցիսկյան վանքը, որտեղ գտնվում էր նաեւ Մխիթար Սեբաստացին: Ավետիքը, մեծ խնջույքներ կազմակերպելով, կարգավորեց իր գործերը Վեղարավորի Ֆրանցիսկյան մեծավոր Հակինթոսի հետ, իսկ նրա միջոցով էլ ձեռք բերեց դեսպան Ֆերիոլի վստահությունը: Միաժամանակ նա Ֆրանկության պատրվակով հալածում էր շատերին՝ Պրուսայի առաջնորդ Սուքիաս եպիսկոպոսին, անհայտ անունով մի ավագերեցի, բազմաթիվ երեցների եւ երեւելի իշխանավորների: Նա նրանց սպառնում էր բանտարկությամբ եւ հետո տուգանք ստանալով՝ ներում էր: Այս ամենը ցույց են տալիս, թե իրականում ինչպիսի անձ էր Ավետիք պատրիարքը: Իր մի շարք քայլերով նա ձեռք բերեց ժողովրդի համակրանքը, իսկ տուժածները միավորվելով բողոքներ էին ուղղում մեծ վեզիրի տեղակալին: Սակայն նա, Ֆեյզուլլահի հրամանով, դժգոհներին բանտարկում էր կամ տուգանում:

*Շարունակությունը՝ էջ 4*

# ԵՐԱԶՈՒՄ ԷԻ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՌՆԱԼ

Սեպտեմբերի 28-ին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի «Նուռ» եկեղեցասեր երիտասարդաց միությունը հայորդյաց տանը կազմակերպել էր հանդիպում հանրահայտ փոփ երգիչ Աբրահամ Ռուսոյի հետ:

Սիրիայի Հալեպ քաղաքում ծնված հայազգի երգիչ Աբրահամ Իփիջյանը հանդիպման ընթացքում խոսեց մանկության տարիների, հավատքի կարեւորության եւ հայրենիքից հեռու ապրող հայ մարդու առջեւ ծառացած խնդիրների մասին: Ի դեպ, նա ուսանել է նաեւ Լիբանանի դպրեվանքում:

- Երազում էի վարդապետ դառնալ, սակայն նախախնամությունն ինձ համար այլ դուռ բացեց: Ես այսօր եկեղեցու ներսում չեմ ծառայում, բայց մտածում եմ, որ անկախ մասնագիտությունից՝ քրիստոնյայի կյանքը պետք է ծառայություն լինի առ Աստված, եւ նշանակություն չունի եկեղեցու ներսո՞ւմ է դա արվում, թե՞ ոչ:

Աբրահամ Ռուսոն ասաց, որ ամեն կիրակի Պատարագի է մասնակցում, եւ եթե անգամ չի հաջողվում եկեղեցի գնալ, ապա օրվա ընթացքում ժամերով աղոթք է անում: Նա երեք տարեկան է եղել, երբ մայրը նրան եկեղեցի է տարել: Այդ ժամանակից եկեղեցին դարձել է, ինչպես երգիչն է ասում, հարազատ տուն: «Հայրս հայերեն կարդալ չգիտեր: Նա թուրքերեն տառերով Աստվածաշունչ էր կարդում»,- հիշում է երգիչը: Աբրահամը յոթ տարեկան է եղել, երբ մահացել է հայրը: Մոր եւ մեծ եղբոր հետ մեկնել են Ֆրանսիա: Տասնվեց տարեկանից երգել է սրճարաններում ու ռեստորաններում՝ ընտանիքի ապրուստի հոգսը թեթեւացնելու նպատակով: Համալսարանն ավարտելուց հետո որոշում է երգարվեստում հմտանալ: Մի շարք երկրներում ապրելուց հետո 1999 թվականին Աբրահամ Ռուսոն տեղափոխվում է Մոսկվա: «Երբ եկա Մոսկվա մեկ բառ անգամ չգիտեի ռուսերեն: Ինձ միանգամից գրավեցին ռուս մշակույթը, լեզուն ու երկիրը: Ես խնդիր դրեցի լիարժեք տիրապետել լեզվին, ու հիմա ինչպես տեսնում եք, դա հաջողվել է ինձ»,- ասաց երգիչը: 11 լեզուների գիտակ հայ երգիչը, խոսելով մայրենի լեզվի կարեւորության մասին, նշեց, որ իր համար անընդունելի է այն հայերի պահվածքը, ովքեր ապրելով այլ երկրներում՝ մոռանում են իրենց լեզուն: Նա հանդիպման եկած հայ երիտասարդներին հորդորեց աչքի լույսի պես պահպանել ու սիրել մայրենի լեզուն. «Ես շատ գրքեր եմ կարդում տարբեր լեզուներով, սակայն Տերունական աղոթքն ու Աստվածաշունչն անպայման հայերեն եմ կարդում, ինչը խորհուրդ եմ տալիս նաեւ ձեզ»:

Հրաշքներ երգչի կյանքում շատ են եղել, սակայն Աբրահամ Ռուսոն կարծում է, որ չպետք է նստել ու սպասել հրաշքների, այլ պետք է աստվածահաճո կյանքով ապրել, որովհետեւ ասված է՝ երանի նրանց, ովքեր չեն տեսնի, բայց կհավատան: «Աստծո ներկայությունն իմ կյանքում ես միշտ զգում եմ, դա ամենամեծ հրաշքն է: Աստված ինձ երբեք չի թողնում, որովհետեւ ես իրեն չեմ թողնում, երբեք չեմ մտածում, թե վաղն ինչ է լինելու, որովհետեւ գիտեմ, որ Տերը բոլոր հուսացողների, վշտացյալների հետ է: Ապրում եմ ներկայով, փորձում եմ ներկայի մեջ քայլել շիտակ, արդար, սիրել իմ մերձավորին, որովհետեւ դա է պահանջում Տերը: Ես եղել եմ Հայաստանում, տեսել եմ Սբ Էջմիածինը, ժայռակոփ Գեղարդավանքը, Խորվիրապը... Սրբավայր է Հայաստան աշխարհը, ես իմ մաշկի վրա զգացել եմ այդ ամենը»,- ասաց Աբրահամ Ռուսոն:



Երգիչը պատասխանեց նաեւ ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին հոգեւոր երգերի կատարմանը, շոու բիզնեսին եւ հետագա ծրագրերին: Երգչի համար հաճելի անակնկալ էր, երբ կենտրոնի մանկական երգչախմբի ղեկավար Լենա Բեգլարյանը սաների հետ կատարեց իր հեղինակային երգերից մեկը: Բուռն ծափողջույնների ներքո երգեց նաեւ Աբրահամ Ռուսոն: Հանդիպման ավարտին երիտասարդաց միության նախագահ Դավիթ Բեկնազարյանն Աբրահամ Ռուսոյին նվիրեց Հայաստանի եւ հայկական եկեղեցիների մասին պատմող մի շարք գրքեր:

«Նուռ» երիտասարդաց միության հոգեւոր ղեկավար Տ. Հակոբ Սարոյանը շնորհակալություն հայտնեց ջերմ զրույցի համար, որն ինչպես տեր հայրն ասաց, լի էր աստվածապարգեւ խորհուրդներով:

Հանդիպմանը ներկա էին Հայեցի դաստիարակության կենտրոնի հոգեւոր տեսուչ Տ. Առաքել քահանա Ամիրյանը, տնօրեն Հմայակ Գեւորգյանը, ուսուցիչներ, սաներ, ինչպես նաեւ մոսկվաբնակ հայ հավատացյալներ:

***Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի մամլո դիվան***

# ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ
## (1897-1937)



*Սկիզբը՝ թիվ 15-18*

Տասներորդ տաղը՝ *«Էլի գարուն կգա, կբացվի վարդը»*, ամբողջովին հագեցած է սիրո հավերժական կրկնության եւ կյանքի ունայնության տրամադրություններով: Նորոգվող գարնան ու բացվող վարդի, բլբուլի երգի ու փոփոխվող ժամանակի, սերունդների հաջորդականության եւ ապրած օրերի անդառնալիության, խաղ ասող աշուղի եւ սիրահարի խոցված սրտի, նորաբաց շուշանի ու լաց լինող գոզալի ավանդական պատկերներով Չարենցն ստեղծում է հոգեցունց հրաժեշտի մի փոքրիկ դրամա: Աշխարհից նեղացած, սիրուց խռով, միայնակ ու չհասկացված ցաված հոգու երգն է սա՝ ներծծված սրտեր հարազատացնող մի այնպիսի տխրությամբ, որ անգամ հավիտենական հեռացման խոսքը բնավ չի դառնում սգերգ կամ եղերերգ, այլ լցվում է կյանքի մշտնջենական բերկրանքով, այդ մշտնջենականության մեջ իր՝ թեկուզեւ անցած կյանքի հիշատակները թողնելու սփոփանքով՝ մանավանդ եթե այս աշխարհից նրան անվերադարձ հրաժեշտի է ուղեկցում սիրած աղջիկը: Այս պահի զգացողությամբ *«Մե խոսկ ունիմ իլթիմազով»* տաղում միջնադարի բանաստեղծը գրում էր. *«Սայաթ-Նովեն ասաց. զալո՜ւմ, յիս էն մահին մահ չիմ ասի՝ // Չենչանք ըլի դուն վըրես լաս մազըտ շաղ տալով, ա՛չքի լուս»*: Ամեն ինչ կրկնվում է այս փուչ աշխարհում, եւ տառապագին ծանր ապրումներով նույն վիճակն է ապրում նաեւ Սայաթ-Նովայի կրտսեր հոգեեղբայրը. *«Ուրիշ սրտի համար կիալվի խունկը, // կբացվի շուշանը, վարդերի տունկը. // Գոզալը լաց կըլի, կընկնի արցունքը - // Գերեզմանիս մարմար քարին կմնա»*:

Սիրո ապրումների հետ մեկտեղ «Տաղարանում» կամաց-կամաց ընդարձակվում են քնարական աշխարհի սահմանները, իրենց մեջ ընդգրկում այլ բնագավառներ՝ խելքը, գիրքը, ծիրքը: Հաշտված սիրո մերժման հետ՝ սիրեկանն սկսում է սրբագործել սիրո «դաղը»: Մերժումն է, որ կատարելությունից չի իջեցնում գոզալին, նրան չի դարձնում առօրյա ու հասանելի: Գոզալի մերժման «դաղը», որով նա իր անհասանելիությունն է ապացուցում, փոխանցվում է բանաստեղծին, նա էլ իր հերթին մտածում է վրեժ լուծել շրջապատից եւ բոլորին ցույց տալ իր մեծությունն ու անհասանելիությունը, բոլորի մեջ՝ նաեւ գոզալին: Այս տրամադրություններին հաջորդում է բանաստեղծի մարդկային եւ ստեղծագործական ճակատագրի պատկերը: Բանաստեղծի հանդեպ շրջապատի հանդուրժող-ընդունող վերաբերմունքն ստեղծվում է սոսկ այն ժամանակ, երբ նա համառորեն տանում է իր ծանր խաչը, երբ դառնում է ծվատված մարմին, նահատակ, զոհ, ողջակեզ: 18-րդ տաղով, ըստ էության, ավարտվում է գոզալի եւ բանաստեղծի սիրո հոգեբանական շղթան: Բանաստեղծն անդառնալիորեն հաշտվում է մերժման հետ՝ միակ մխիթարանքը գտնելով նրանում, որ իր ապրումների աշխարհը դարձել է երգ եւ իրենից հետո էլ սկետք է ապրի մարդկանց մեջ: Սիրո ու աշխարհի հանդեպ ունեցած ինքնանվիրման այն ասպետական, վեհանձն ոգին, որով բանաստեղծը մուտք էր գործել իրական կյանք, ավարտվում է նույնպիսի ինքնազոհաբերում-հրաժեշտով. *«Ձեզ կթողնեմ երգերս այս՝ կյանքս երազ - ու կերթամ»*:

Թվում է՝ այստեղ պետք է ավարտվեր «Տաղարանը», սակայն դեռեւս շարունակվում է՝ բանաստեղծի ու շրջապատի հարաբերությունների հենքի վրա վեհորեն բարձրացնելով կապուտաչյա սիրուհու՝ Հայաստան-յարի բանաստեղծական կերպարը: Բարբառի օգտագործումը երկրի անվան կողքին պատահական չէ: Դա կնոջ հանդեպ ունեցած անպատասխան սիրուց հայրենիքի բարձրագույն սիրուն նվիրվելու խորհուրդն ունի: *«Աշխարհում փուչ է ամեն երազ ու լաց»* գիտակցությունը չի տարածվում միայն հայրենիքի վրա: 19-րդ տաղը՝ *«Հայաստանին»* ուղերձով, ասես բանաստեղծի անհատական ճակատագրի բեկումը լինի երկրի անցած ու գալիք պատմության մեջ: Ճակատագիր-պատմություն՝ լի ողբերգությամբ, հանճարներով ու երգով:

**«Ես իմ անուշ Հայաստանի արեւահամ բառն եմ սիրում»** վերջին տաղը աշխարհին ի մի բերող ուժն է, ամեն ինչից վեր այն միակ պարգեւը, որն աշխարհի ու ժամանակի սկզբնավորման օրվանից սերունդների մաքառումների գնով շնորհված է մարդուն:

Եվ դա գերագույն ու բացարձակ սեր է՝ մահկանացու բոլոր սերերից դուրս:

Այս տաղը Հայաստանի գեղարվեստական պատկերի խտացումն է, Հայաստանի պատմության ու բնության յուրահատկությունների ոգեղեն համադրությունը: Հատկանշական երեւույթների թվարկումով ու դիպուկ բնորոշումներով Չարենցն ստեղծում է հայրենի երկրի մի այնպիսի գեղարվեստական պատկեր, որը վերածվում է ժողովրդի վաղնջական բնօրրանի բանաստեղծական քարտեզագրման: Ստեղծվում է Հայաստանի նկարագրական պատկերը: Արեւահամ բառի ու ողբաձայն երգերի, արնանման ծաղիկների ու նաիրյան աղջիկների, երկինքների ու ջրերի, ամառվա արեւի ու ձմռան բքի, արտաքուստ անհյուրընկալ խրճիթների ու հազարամյա քաղաքների, երկաթագիր գրքերի ու արյունաքամ վերքերի, Նարեկացու եւ Քուչակի ու այս ամենի հնօրյա խորհուրդը հանդիսացող Արարատ լեռան միջոցով Չարենցը տեսանելի հատկանիշներով կերպավորում է հայրենիքը: Թվարկումներն ու նկարագրությունները ձուլվում են հայրենասիրական զգացմունքների հրդեհված հնոցում՝ ամբողջությամբ ստեղծելով հայրենահիացումի մի շնչավորված մթնոլորտ, որը ե՛ւ անցյալ է, ե՛ւ ներկա, ե՛ւ ապագա, ե՛ւ, ընդհանրապես, հավերժություն:

Այս տաղը Չարենցն սկսում է այնպես, ինչպես սկսվում է Հովհաննու Ավետարանը: Ավետարանում ի սկզբանէ *«էր բանն»*, այսինքն՝ խոսքը, որը Աստծունն էր, Չարենցի տաղում ի սկզբանէ *«արեւահամ բառն»* է, որը բանաստեղծինն էր: «Արեւահամ» մակդիրը շատ դիպուկ է բնորոշում Արարատյան բարկ արեւի տաք թրծված հայոց բառը:

Սկիզբը պիտի բառ լիներ, որպեսզի պատկերի տրամաբանությամբ վերջին տների մեջ դառնար ողբաձայն երգ, աղոթք դարձած երկաթագիր գիրք, Նարեկացի ու Քուչակ:

Մ. Սարյանն այդ տաղի մասին գրել է. *«Ես իմ անուշ Հայաստանին» բոլոր մասշտաբներից դուրս պաննո է: Պաննո՝ հասցված ժողովրդական էպոսի աստիճանին: Դա անհիշելի ժամանակներից եկող Հայաստան-Ուրարտու-Արմենիա երկրի համապարփակ պաննո-դիմանկարն է: Դա մեր ազգային կենսագրության ու վարքի կենդանի արտացոլումն է»*: Իսկ Վիլյամ Սարոյանը, անգիր արած այդ տաղը եւ անչափ ոգեւորված դրանով, գրել է. *«Չայն մինչեւ այսօր կնկատեմ մեր երկրին, մեր հողին, մեր պատմության նվիրված ամենեն գեղեցիկ երգը, գովաբանական աղոթքը: «Հայր մեր»-ին նմանվող աղոթք մը»*:

**ԲԱՆԱՍՏԵՂԾՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՍԵՄԻՆ:** 1920-ական թթ. առաջին կեսին Չարենցն ստեղծագործական նոր որոնումների մեջ էր: 1922-ին Ա. Վշտունու եւ Գ. Աբովի հետ մեկտեղ հրատարակում է «Երեքի» դեկլարացիան, 1923-ին փորձում լույս ընծայել «Ավանգարդ» վերտառությամբ ֆուտուրո-կոնստրուկտիվիստական պարբերական, 1924-ին համախոհների համագործակցությամբ տպագրում «Standard» ամսագրի միակ համարը: Մեկը մյուսի ետեւից նա կազմակերպում է գրական միջոցառումներ՝ շեփորահանդեսներ, տպագրում գրական բյուլետեններ, նոր բանաստեղծության ուղին ցույց տալու համար գրում բազմաթիվ հոդվածներ: Չարենցի նպատակը նոր գրական հոսանքների ներգործությամբ ետխորհրդապաշտական շրջանի հայ գեղարվեստը թարմացնելն էր, թմբիրից գրական կյանքն արթնացնելը:

Այդ նպատակին հասնելու համար նա դիմում է ծայրահեղությունների, անգամ՝ գրում քարոզչական բնույթի գործեր: Նոր արվեստի գեղագիտությամբ նա գրեց *«Ամենապոեմ»* (1920-1921), *«Ռոմանս անսեր»* (1922), *«Մաճկալ Սաքոյի պատմությունը»* (1924) պոեմները, *«Կապկազ. թամաշա»* (1923) քաղաքական կատակերգությունը, *«Կոմալմանախ»* (1924) ժողովածուն եւ մի քանի բալլադ: Նույն այս տարիներին նա ստեղծեց նաեւ այնպիսի նշանակալից գործեր, ինչպիսիք են *«Պոեզոզուռնա»* (1922) ժողովածուն, *«Երկիր Նաիրի»* (1921-1924) վեպը, *«Ասպետական»* ռապսոդիան (1922), *«Չարենցնամե»* (1922) պոեմը եւ այլ երկեր:

*«Պոեզոզուռնա»*, այսինքն՝ պոեզիայի զուռնա, զրնգուն ու բարձր բանաստեղծական նվագներ, որոնք Չարենցը հնչեցնում էր՝ իր երգը ծառայեցնելով Հայաստանի կառուցման գործին: Ամենայն անկեղծությամբ ու հավատով նա գրում էր.

*Շարունակությունը՝ էջ 6*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԱՀԱՊԵՏ Ա ԵԴԵՍԱՑԻ
## (1691-1705)

*Սկիզբը՝ էջ 3*

Այդ ժամանակ էր, որ Հովհաննես Ամասիացին ուղարկվեց Երուսաղեմ, իսկ Կ. Պոլսի պատրիարքի փոխանորդ նշանակվեց Հովհաննես Զմյուռնիացի վարդապետը: Օգտվելով Հակինթոսի վրա ունեցած ազդեցությունից՝ Ավետիքն առաջարկեց փոխադարձ հաշտարար հարաբերությունների պայմանագիր կնքել եւ խնդրեց, որ լատիններն էլ մասնակցեն արվելիք ծախսերին, չպաշտպանեն իրենց ապավինած Մխիթար Սեբաստացուն եւ երեք քահանաներին, որը կնպաստի թշնամությանը: Նա խոստացավ նրանց լավ ընդունելություն ցույց տալ, երբ նրանք իրեն դիմեն: Նա նույնիսկ Հակինթոսի միջոցով սիրալիր նամակ ուղարկեց Մխիթար Սեբաստացուն՝ խոստանալով նրան բարձր պատիվների արժանացնել եւ պատրիարքության մեծ գործերի գլուխ կանգնեցնել:

Հակինթոսը, դրանից ոգեւորված, իր մոտ ապաստանածներին առաջարկեց վստահորեն գնալ պատրիարքի մոտ, քանի որ նրանց իր վանքում այլեւս պահել չէր կարող: Նույն կարծիքին էր նաեւ դեսպան Ֆերիոլը: Երեք քահանաները գնացին պատրիարքի մոտ եւ խաղաղությամբ ընդունվեցին նրա կողմից, սակայն Մխիթար Սեբաստացին սկզբում քաշվեց մի անծանոթ տուն, բայց այնտեղ էլ իրեն ապահով չզգալով՝ թաքնվում էր այս կամ այն առաստաղի տակ: Երբ Մխիթարը չներկայացավ, Ավետիքը կարգադրեց խուզարկություններ կատարել: Դա միանգամայն հասկանալի գործողություն էր՝ անարգված պատրիարքի պարագայում: Իսկ Մխիթարը՝ վաճառականի հագուստով, օտարազգիների օժանդակությամբ նավ է նստում եւ մեկնում Զմյուռնիա: Նա սկզբում հաստատվում է վաճառականների պանդոկում, հետո իջեւանում ճիզվիտների մոտ, բայց իրեն ապահով չի զգում: Վախենալով Ավետիքի հետապնդումներից՝ նա նավով ուղեւորվում է Վենետիկ: Նավը նրան ափ է հանում Զակյունթիա կամ Զանթա կղզում, որը հեռու էր Մխիթարի նպատակների վայրից: Նրա մեկնումը կատարվեց 1702 թվի սեպտեմբերին: Զանթայում նա մնաց մինչեւ 1703 թվի փետրվարը:



Մխիթարի նպատակը Լիբանանի մարոնականների մոտ գնալն էր: Մարոնականներն ազատ վարչության եւ պատրիարքության իրավունք ունեին: Նրանք կաթոլիկությանը հարել էին մեկ դար առաջ՝ Գրիգոր ԺԳ պապի օրոք: 1701 թվին Սբ Եղիսեի մայրավանքում, որը մարոնականների Սբ Զորում էր, առաջնորդ էր ընտրվել Աբդուլլահը: Արաբ քրիստոնյաների այդ քայլը՝ կաթոլիկանալը, մեծ ազդեցություն է թողնում հայազգի չորս եղբայրների վրա, որոնք կամենում են նույնպիսի՝ հայկական հաստատություն ստեղծել մարոնականների հովանավորության ներքո: Այդ չորս եղբայրները որդիներն էին Մուրադի եւ թոռները՝ Հովսեփի, որը Պարսկաստանի կողմերից գաղթել էր Բերիա կամ Հալեպ՝ մի կես դար առաջ, եւ չի բացառվում, որ նա ունիթոր ջահկեցիներից էր: Ավագ եղբայրն Աբրահամն էր՝ մի խոշոր առեւտրական տան գլուխ, այլ խոսքով՝ փերեզակ: Նա Բերիայից եկել էր Լիբանան՝ իր կրոնական ձեռնարկի համար տեղեկություններ հավաքելու եւ Աբդուլլահի հետ խորհրդակցելու համար: Թերեւս այդ մասին Մխիթար Սեբաստացին լսել էր կամ Բերիայում ծանոթացել էր Մուրադյան եղբայրների հետ:

*Շարունակելի*

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր***

# ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆ



*Սկիզբը՝ թիվ 18*

Շահնուրն այն համոզմանն էր, որ միայն ուժեղ ազգերը կարող են իրենց թույլ տալ խոսել սեփական թերությունների եւ վարընթացի մասին: Իր վեպին տրված վերնագիրը՝ «Նահանջը առանց երգի», արդեն այդ մտայնության արտահայտությունն է՝ նահանջ առանց դիմադրության, նահանջ առանց ընդվզման, ասել է թե՝ առանց երգի դեպի «դալկոտ ապագան»: Վեպն իրոք «խոսում է» ու «վկայում» այդ վարընթացը: Այն մի վավերաթուղթ է տարագրության ճամփաները բռնած ինչպես ողջ սփյուռքահայության, այնպես էլ ամեն մի հայի ինքնաձուլման մասին: Վեպում ազդու է հնչում նահանջի ահազանգը. «Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսայ, կը նահանջեն բարք, ըմբռնում, բարոյական, սէր: Կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն: Եւ մենք դեռ կը նահանջենք բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղա՜յ, մեղա՜յ Արարատին»:

Շահնուրն իր վեպում բացահայտում է մեր տխուր պատմության ողբերգական մի շարք շերտեր, ընդգծում դրանց ծագման ու զարգացման պատճառահետեւանքային կապերը, մերժում բոլոր այն մարդկանց ու կազմակերպությունների գործը, որոնք «նախապատրաստեցին» ազգի՝ «պարտության այդ զառիթափին վրա գտնվելու» վիճակը, նախնի հայ թագավորներին՝ իրենց անիմաստ վարքի, կրոնավորներին՝ իրենց դոգմատիկ գաղափարախոսության, ազգային կուսակցություններին՝ իրենց անհեռատես գործունեության, «ազգի պետերին»՝ անձեռնահասության համար: Թշնամին թշնամի էր ու իր թշնամությունն արեց: Շահնուրի ասելիքն այն է, որ մենք էլ մեղքի մեր բաժինն ունեցանք:

Իհարկե նոր բան չէր Շահնուրի մոտեցումը: Նրանից առաջ նրա բարեկամ բանաստեղծ Վահան Թեքեյանն իր «Կենդանություն հայրենի» քերթվածում նույն իրողությունն է հաստատել.

*Ձմեզ օտարը խոցեց,*
*Խոցեցինք մենք ալ զմեզ:*

Իրենց ազգային թերությունների ու վրիպումների մասին համաշխարհային գրականության մեջ անողոք են գրել նաեւ Ստենդալը, Բոդլերը, Գոգոլը, Հայնեն եւ շատ ուրիշներ: Ինչպես նրանց, այնպես էլ Շահնուրի նպատակադրումը մեկն է եղել՝ ձերբազատվել թերություններից: Տարբերությունն այն է, որ վերոհիշյալ մեծերի առջեւ ծառացած չի եղել իրենց ժողովրդի լինել-չլինելու խնդիրը:

Շահնուրը լավ գիտեր իր ընթերցողին: Տասնամյակներ շարունակ նրան սովորեցրել էին, թե գրականության կոչումն է անցյալի փառքերի տարփողումը: Ու թեեւ նրա վեպը շարունակում էր հայ գրականության առանձնահատկություններից մեկը՝ կյանքի բոլոր երեւույթների նկատմամբ քաղաքական ու ազգային հայացքի դրսեւորումը, որը բացատրվում է հայ ժողովրդի ազգային կյանքի խնդիրների դարավոր չլուծվածությամբ, Շահնուրը հակառակ ծայրից է մոտենում խնդրին. քննադատության ու արժեքների մերժման միջոցով է ջանում հասնել խնդրի լուծմանը: Այդ նպատակին նպաստում են նաեւ վեպի գեղարվեստական արժանիքները՝ լարված կոնֆլիկտ, սուր մենախոսություններ, հոգեկան բարդ կացություններ, պատումի դրամատիկական լիցք, կտրուկ ոճ, խոսքի ողբերգական շեշտադրումներ:

Վեպի արժանիքներից է եւ այն, որ հեղինակը սփյուռքահայության խառնաշփոթ, տարերային կյանքը «կանոնակարգում» է, ճանաչելի դարձնում, դրան զուգահեռ՝ ընդվզում ամեն կարգի հոգեւոր ու ազգային խեղճության դեմ, իր ընթերցողին ինքնավստահության մղում, որը խիստ արդիական էր դարձնում նրա ստեղծագործությունը, մարդկանց սնում հավատով ու հույսով, բաներ, որ պիտի աներ հայրենի հողը, եթե իհարկե լիներ...

Գաղթականությունը մի երեւույթ էր, որ ծայրագույն սրացման էր հասցնում մարդկանց զգացումները, խառնում հասարակություն ու սերունդներ:

Վեպն ուղղված էր մանավանդ 20-րդ դար թեւակոխած գաղթահայ երիտասարդությանը: Որքան էլ բարյացակամ լիներ ապաստան տված երկրի վերաբերմունքը, անշեղորեն գործում էր օտար բարքերի ապականիչ պարտադրանքը: Ամեն գաղթականի կողքից քայլում էր այլասերող մահը: Մարդկային լիարժեքության զգացողությունն օտար մի բան էր դարձել նրա համար: Նա կես մարդ էր՝ ոչ այն է հայ, ոչ այն է ֆրանսիացի, ամերիկացի կամ այն երկրացի, որտեղ ապրում էր: Գաղթականությունը, Շահնուրի լեզվով ասած, «աղի-լեղի» էր դարձնում ոչ միայն հայ մարդու կյանքը, այլեւ մտածողությունը (այդպիսի մտածողությամբ է Շահնուրը գրել իր վեպը): Եվ որքան էլ հայ գաղթականի համար չկար ու չէր կարող լինել «կարոտ», «աքսոր», «որբ» եւ հազարավոր այլ հայ բառերի համարժեքը օտար որեւէ լեզվում, որոնք լոկ բառեր չեն, այլ ճակատագիր ու ոգի, մորմոք ու վիշտ՝ միշտ անթարգմանելի ու անհասկանալի օտար մարդուն, այնուամենայնիվ ազգային վարընթացը փաստ էր, եւ Շահնուրն իր վեպով ջանում է ըմբռնել տալ փլուզվող այդ կացությունը եւ ամեն մի գաղթական հայի «գիտակցել տալ ինքզինքին», քանի որ արշավող սամումը սպառնում էր վերջ տալ ազգի նաեւ հոգեւոր գոյությանը:

Շահնուրն իր վեպով գալիս է ասելու նաեւ, որ ազգային հոգս ու ցավից զատ՝ կան նաեւ կյանքի ուրիշ արժեքներ. «... առաւօտ մը, որ դեռ չէ դիմաւորած աքաղաղը», այլ խոսքով՝ ազգային աստվածներից զատ՝ կան նաեւ չաստվածներ, որոնք նույնքան հզոր են ու տիրական, մանավանդ երբ դու երիտասարդ ես: Եվ պատահական չէ, որ վեպում շոշափվող ազգային-քաղաքական խնդիրներին զուգահեռ ծավալվում է Պիեռ-Նենեթ սիրո պատմությունը, որը Պետրոսի նախորդ «սերերից» տարբերվում է էականորեն: Այս դեպքում մարմնապաշտությունը չէ, որ գայթակղել է երիտասարդ հային: Հարազատներից կտրված որբ տղան՝ Պետրոսը, որ կարոտն ունի գորովի ու մխիթարության, փրոյդիստական սեռական հակումներով չէ, որ կապված է Նենեթին: Մալարմեական կանացի հրապույրները՝ գրավիչ շպար, թանկարժեք օծանելիքներ, կարճ քղանցք, շեկ վարսեր...., իհարկե իրենց դերը կատարում են, բայց նրանց մեջ ապրում է ծնվող ու մեռնող (հայտնի է անտի, որ երջանիկ սեր աշխարհում առհասարակ չկա) մի իսկական սիրո զգացում, որ կլանիչ է ու գրավիչ ու անկեղծության պահերին դրսեւորվում է հոգեկան անմնացորդ նվիրաբերումով, միմյանց պարգեւում մխիթարություն ու հաճույք, նույնքան՝ տվայտանքներ, կասկածներ ու դրամատիկական բաժանումներ:

Նենեթը, որ Պետրոսին ներկայանում է որպես կանացիության, շքեղության, նազանքների ու քմահաճույքների մարմնացում, դրսեւորումն է նաեւ գրողի կոչման մասին Շահնուրի ունեցած տեսակետի. «Գրագէտ մը իր մատը ամենեն աւելի պետք է դնի մարդկայինին եւ գեղեցիկին վրայ»: Ողբերգությունն այն է, որ այդ մարդկայինն ու գեղեցիկը այս դեպքում տանում են ազգային նույն սպառմանն ու քայքայմանը, քանի որ սպասվելիք վախճանը խառնամուսնություն պիտի լիներ, որը արտառոց ոչինչ չէր պարունակի, եթե այն տեղի ունենար կյանքի բնական պայմաններում: Մինչդեռ կյանքի դժբախտ բերումն էր, որ նրանց հանդիպեցրել է. մեկը զոհն է իր ժողովրդին վրա հասած նախճիրի, մյուսը՝ Առաջին համաշխարհային պատերազմի բերած աղետների:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԿԱ

Այն, որ գիտական փաստերը ճիշտ համադրելու եւ հասկանալու դեպքում համայն տիեզերքի արարված, ոչ թե ինքնաբերաբար ստեղծված լինելու հանգամանքն ենք տեսնում, կասկածից վեր է: Ասվածն արդեն փորձեցինք ապացուցել՝ խոսելով Մեծ պայթյունի եւ գիտնականների, հատկապես ֆիզիկայի կոսմոգոնիայի, այսինքն՝ տիեզերքի առաջացման կամ տիեզերածնության բաժինն ուսումնասիրողների մի շարք հետազոտությունների արդյունքների մասին (տե՛ս «Քրիստոնյա Հայաստանի» հունիս Բ համարի համանուն հոդվածը): Համաձայն նրանց տվյալների՝ տիեզերքն առաջացել է աննկարագրելի մեծ մի պայթյունից, որի ուժն ստիպում է այն կազմող բոլոր նյութական զանգվածներին անընդհատ հեռանալ միմյանցից՝ չնայած նրանց միջեւ առկա ձգողության ուժին: Բայց ե՞րբ է այն առաջացել, որքա՞ն է տիեզերքի տարիքը, այսինքն՝ այն ժամանակահատվածը, որը մեզ բաժանում է Մեծ պայթյունից:

Մեծ պայթյունի կամ տաք տիեզերքի գաղափարն առաջին անգամ արտահայտել է ամերիկացի ֆիզիկոս, ազգությամբ ռուս Գեորգի Գամովը՝ 1948 թվականին:

Առանձնահատուկ հետաքրքրություն էր ներկայացնում տիեզերքի սառեցման տեմպը Մեծ պայթյունից հետո: Սկզբնական ջերմաստիճանը չափվել կարող էր միլիարդավոր աստիճաններով: Անհրաժեշտ էր զգույշ եւ խնամքով հաշվարկել, թե ինչպիսին պետք է լինի Մեծ պայթյունից մնացած եւ 20 միլիարդ տարի անց մեզ հասած մնացորդային ճառագայթման ջերմաստիճանը: Տեսական հաշվարկները ցույց տվեցին, որ այն պետք է կազմի 6 աստիճան կելվին: Չափազանց փոքր թիվ, որի չափումը գրեթե անհուսալի էր:



1965 թվականին ամերիկացի երկու ռադիոֆիզիկոսներ Պենզիսը եւ Վիլսոնը առաջադրանք էին ստացել բարելավել «Էխո» արհեստական արբանյակի հետ ունեցած ռադիոկապը՝ մոտ 7,5 սանտիմետրանոց ալիքում: Իրենց տրամադրության տակ ունեցած ռադիոալեհավաքը չափերով մեծ չէր, եւ հիկայական աշխատանք կատարվեց ամեն տեսակի բնական ու արհեստական ռադիոաղմուկները վերացնելու ուղղությամբ: Նրանց հաջողվեց իրենց ռադիոտեխնիկայի զգայունությունը հասցնել այն ժամանակի համար բացառիկ բարձր աստիճանի: Երբ, հետաքրքրությունից դրդված, ալեհավաքն ուղղեցին տիեզերքի տարբեր կողմերը, նկատեցին անսպասելին. արձանագրված ռադիոազդանշանները թեպետ շատ թույլ, բայց իրենց ուժով միատեսակ էին երկնքի բոլոր ուղղություններում: Շուտով հաստատվեց, որ Վիլսոնի եւ Պենզիսի հայտնաբերած ռադիոհոսանքները ոչ մի կապ չունեն Երկրի մթնոլորտի հետ, եւ որ դրանք գալիս են տիեզերքից:

Դիտումները շարունակվեցին մի ամբողջ տարի. ռադիոհոսանքը մնում է բացարձակապես անփոփոխ բոլոր կողմերից՝ անկախ երկրագնդի՝ արեգակի նկատմամբ ունեցած դիրքից: Երբ չափեցին արձանագրված ռադիոհոսանքը կելվինյան ջերմաստիճանով, ստացվեց երեք աստիճան կելվին: Ի՞նչ էր սա, եթե ոչ Մեծ պայթյունի մնացորդային ճառագայթումը, որը 20 միլիարդ տարի անց, ըստ տեսական հաշվարկների, նվազելով պետք է հասներ 6 աստիճան կելվինի: Սակայն այս դեպքում տեսական հաշվարկի եւ դիտարկված մեծության միջեւ եղած տարբերությունը 3 աստիճան կելվին է, ինչն աննշան է:

Հետագա բազմաթիվ ստուգումները միայն հաստատեցին հայտնագործության աներկբա լինելը: Մեծ պայթյունը դադարեց հիպոթեզ, այսինքն՝ գիտական վարկած լինելուց եւ դարձավ եղելություն՝ շոշափելի, ակնառու: Այս առթիվ անվանի ֆիզիկոս Նատալյա Բեխտերեւան ասել է. «Գիտությունը մտել է մի փուլ, երբ այն հաստատում է կրոնի մի շարք դրույթներ՝ ուղղակի կամ անուղղակի կերպով»:

Իսկ ի՞նչ է տեղի ունենում Մեծ պայթյունի պահին: Այստեղ գործում են նյութի եւ էներգիայի միջեւ գոյություն ունեցող էյնշտեյնյան սկզբունքները: Ինչպես նյութը կարող է վերածվել էներգիայի, այնպես էլ հակառակը՝ լուսային ֆոտոնը կարող է փոխարկվել տարրական մասնիկների: Լուսային երկու ֆոտոնների ճակատ առ ճակատ բախումից առաջանում են 2 տարրական մասնիկներ՝ պայմանով, որ ֆոտոնների էներգիան բավականաչափ մեծ լինի: Օրինակ՝ 6 միլիարդ աստիճան ունեցող միջավայրում ծնված 2 ֆոտոնների փոխադարձ բախումից առաջանում են 1 էլեկտրոն եւ 1 հակաէլեկտրոն, այսինքն՝ պոզիտրոն: Ավելի բարձր կամ ցածր ջերմաստիճանում էլեկտրոն եւ պոզիտրոն չեն առաջանա: Իսկ 6 միլիարդ աստիճան միջավայր ստեղծվում է Մեծ պայթյունից ընդամենը մեկ վայրկյան հետո, ուրեմն էլեկտրոնի եւ պոզիտրոնի առաջացման պրոցեսն սկսվում եւ ավարտվում է այդ մեկ վայրկյանի ընթացքում: Այսինքն՝ այդ ընթացքում են առաջացել բոլոր էլեկտրոններն ու հակաէլեկտրոնները, կամ որ նույնն է՝ պոզիտրոնները (համապատասխանաբար՝ բացասական եւ դրական լիցք ունեցող մասնիկները), որոնցով հիմա լցված է ողջ տիեզերքը:

Տարրական մասնիկների մյուս, առավել տարածված տեսակը պրոտոններն եւ հակապրոտոններն են, որոնք էլեկտրոններից ծանր են մոտ 2000 անգամ եւ նույնպես առաջանում են ֆոտոնների ճակատային բախման հետեւանքով: Բայց քանի որ նրանք անհամեմատ ծանր են, ուրեմն այդ դեպքում ջերմաստիճանը պետք է լինի շատ ավելի բարձր՝ հազարավոր միլիարդ աստիճան: Այդպիսի ջերմաստիճան ստեղծվում է պայթյունից մեկ միլիոներորդ վայրկյան հետո: Այսինքն՝ պրոտոնների եւ հակապրոտոնների առաջացումը նախորդում է էլեկտրոնների առաջացմանը:

*Շարունակությունը՝ էջ 8*

## Կից սենյակում

### ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ

# «ԿՈՐԱԾ ՈՉԽԱՐԻ ԵՎ ԿՈՐԱԾ ԴՐԱՄԻ ԱՌԱԿՆԵՐԸ»

*(Ղուկ. ԺԵ 1-10, Մատթ. ԺԸ 12-14)*

**Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ**



*Սկիզբը՝ թիվ 18*

**- Տե՛ր հայր, մարդ արարածը, անգամ ի սրտե զղջալուց ու ապաշխարելուց հետո, իր տկարության պատճառով դարձյալ կարող է սայթաքել ու նույն մեղքի մեջ հայտնվել, քանի որ, ինչպես գիտենք, սատանան մարդուն ավելի շատ եւ առավել սուր նետերով փորձում է առ Աստված դառնալուց հետո: Ուրեմն՝ մարդն ավելի խոցելի՞ է դառնում՝ Աստծուն գտնելով:**

- Ճիշտ կլինի ասել՝ ոչ թե խոցելի, այլ սատանայի համար թիրախ, նշանակետ: Սրանք տարբեր բաներ են: Որովհետեւ երբ մարդ դառնում է առ Աստված, ընդհակառակը, նա պահպանության պարիսպներով է շրջապատվում Աստծու օրհնությամբ, հետեւաբար պակաս խոցելի է դառնում սատանայից, ինչի պատճառով էլ դառնում է թիրախ: Հեշտ խոցելի մեկը, ուրեմն, խնդիր չէ սատանայի համար, այլ՝ դարձի եկածը: Այսինքն՝ սատանան իր ողջ զինանոցը կենտրոնացնում է այն օջախի վրա, որը չի կարողանում նվաճել: Սա շատ առարկայական օրինակով էլ կարելի է բացատրել: Պատկերացրեք՝ մի ազգ նվաճել է մյուսին, սակայն որոշ անառիկ բարձունքներ մնացել են աննվաճ. պարզ է, որ նա առանձնապես ուշադրություն չի դարձնելու արդեն նվաճած տարածքների վրա, այլ ողջ ուժերով պիտի գրոհի անառիկ մնացած բարձունքները: Նույնատիպ իրավիճակ է ստեղծվում սատանայի եւ այլեւս Աստծուն դարձած անձի միջեւ. սատանան կորցրել է իշխանությունը, պարտություն է կրել, սակայն իբրեւ կատաղած շուն, իբրեւ հին օձ, իբրեւ Աստծու ոխերիմ թշնամի՝ մշտապես պիտի աշխատի այլեւայլ, նոր հնարքներով, աննկատ կերպով, նենգաբար, խորամանկորեն իր ծուղակը գցել մարդուն: Եվ հենց այստեղ է, որ գործի է դրվում աջակողմյան շեղման «մեքենան»: Ընդհանրապես հոգեւոր կյանքը շատ բարդ ընթացք է. հազար ու մի հարցեր կան, անդադար ընտրության խնդիր կա: Եվ այդ ընտրության մեջ միշտ չէ, որ հավատացյալ մարդը կարողանում է ճիշտ կողմնորոշվել: Թերեւս, մարդը սրտանց ուզում է Աստծու ճանապարհով ընթանալ եւ չշեղվել, բայց երբեմն ուղղակի չի կարողանում ճիշտ ընտրություն կատարել, ճիշտ որոշում կայացնել: Եվ հենց նման իրավիճակներում է, որ սաստկանում է չարի հարձակման թափը՝ նորանոր հնարքներով: Եվ հենց այստե՛ղ է պետք մարդու՝ առ Աստված ձգտումը, աստվածպաշտությունը, աստվածճանաչողությունը, Աստծու խոսքի իմացությունը եւ անսասան հավատքը, որպեսզի չարի խայծը կուլ չտա:

**- Ուրեմն ՝ եթե բարդ ընտրության առաջ ենք կանգնած, միշտ պետք է մտածե՞նք՝ ինչպես Սուրբ Գիրքը կթելադրեր, կամ ինչպես կկամենար Տերը, որ անեի այս իրավիճակում...**

- Եթե միայն մտածենք, թե ինչպես կկամենար Տերը, թերեւս նաեւ սխալվենք: Մինչեւ Քրիստոսի գալուստը հրեա ժողովուրդը բոլորովին այլ պատկերացում ուներ Մեսիայի՝ Փրկչի մասին: Որեւէ մեկը չէր պատկերացնում, որ Նա գալու է խոնարհությամբ: Եթե Նա որոշեր թագավոր դառնալ, հրեաները թերեւս ընդունեին Նրան՝ որպես առաջնորդ արքայի, ով իրենց պիտի ազատեր հռոմեական լծից: Բայց իրենց հույսերը չարդարացան, որովհետեւ Քրիստոսը հայտնվեց խոնարհությամբ, ըմբոստության ու պատերազմի փոխարեն ապաշխարության, սեփական մեղքերի դե՛մ պատերազմի կոչեց:

Այսօր էլ, թերեւս, շատերը չկարողանային հասկանալ այդ ամենը: Բայց հենց այստեղ է, որ օգնության է հասնում Մայր Եկեղեցու 2000-ամյա սրբազան ընթացքը: Ինչո՞ւ. որովհետեւ նա (Եկեղեցին) Քրիստոսի խոսքն ու գործը իր կյանքի մեջ լիարժեքորեն իրականացրել է եւ ուրեմն՝ ունի փորձառությամբ սնված իմաստություն, ինչն անսխալորեն կարող է օգնել ամեն մեկիս, երբ կանգնած ենք դժվար ընտրության առաջ:

**- Նախանձ, հպարտություն, չարակամություն, կեղծավորություն... փարիսեցիներին բնորոշ այս մոլորություններն ու շեղումները պակաս վտանգավոր չեն, քան, ասենք, հեթանոսների եւ տգետների՝ հաճախ ակամա գործած մեղքերը, այսպես կոչված՝ ձախակողմյան մեղքերը: Գուցե հրեաներն ավելի շա՞տ ունեին կարիքը Տիրոջ քարոզների եւ ուշադրության: Մինչդեռ չապաշխարեցին եւ այդպես չապաշխարելով էլ՝ խաչը հանեցին Տիրոջը:**

- Այն, ինչն ակնարկում եք, բացառապես հոգեւոր կեցվածքի խնդիր է եւ որեւէ կապ չունի շատ կամ քիչ քարոզելու հետ, այլ միայն՝ կամեցողության ու խոնարհության: Թող որեւէ մեկը չմտածի, թե Քրիստոսը փարիսեցիներին չքարոզեց կամ չուզեց քարոզել: Ճիշտ հակառակը. մեկ անգամ չէ, որ Նա ասաց, թե Ինքը եկել է՝ Իսրայելի տան կորած ոչխարը գտնելու: Այսինքն՝ Իր առաքելությունը Քրիստոսն իրագործեց առաջին հերթին հրեա ազգի մեջ եւ նրա համար: Նրա սիրտն ամենից շատ ցավում էր Իր ազգակիցների համար, ու պատահական չէ, որ Իր աշակերտներին եւս նախ Իսրայելի քաղաքներն ուղարկեց: Սակայն Քրիստոսը պարզորոշ տեսնում էր, որ ոսկու եւ շքեղության մեջ փայլող՝ Աստծու քաղաքի ճակատը մահվան դրոշմով էր կնքված: Եվ Նա նույնիսկ լաց եղավ Երուսաղեմի վրա, քանզի տեսավ, որ քարը քարի վրա չպիտի մնա: Անգամ Գողգոթայի ճանապարհին, երբ կանայք «կոծում էին ու ողբում Նրան», Նա պատասխանեց. «Երուսաղեմի՛ դուստրեր, ինձ վրա լաց մի՛ եղեք, այլ լաց եղեք ձեր եւ ձեր որդիների վրա» (Ղուկ. ԻԳ 28): Սակայն այդ պահին այդ սերնդին առաջնորդող մարդիկ այլեւս գրեթե հավատքն ուրացած մարդիկ էին, ովքեր կույր մոլեռանդությամբ իրենց հոգու աչքերը կուրացրած, իրենց ականջները խցած՝ չուզեցին տեսնել, որ իրենց մեջ հայտնվել է Աստծու Որդին, չուզեցին լսել Հիսուսի ապաշխարության եւ հոգեւոր արթնության կոչող քարոզները: Նրանք տեսնում էին Տիրոջ սուրբ կյանքը, տեսնում էին բազմաթիվ հրաշքները: Տեսնում ու... չէին տեսնում: Հետեւաբար իրենց համար տեսնելու, լսելու կամ հասկանալու խնդիր չկար, այլ միայն կամեցողության, ինչի փոխարեն տեսնում ենք անապաշխար, խստասիրտ ու թշնամական մի կեցվածք, որն ուրացություն էր Աստծու դեմ: Եվ այս ամենի հետ՝ կեղծավորությունը, որի հետեւանքները հեթանոսների գործած մեղքերից պակաս վտանգավոր ու ավելի թեթեւ չէին:

**- Աստված սպասում է յուրաքանչյուրիս դարձին եւ անկեղծ զղջմանը: Սակայն, ցավոք, մեղավոր մարդն իր ազատ կամքով հաճախ համառում է մեղքի մեջ եւ չանսալով աստվածային կանչին՝ շարունակում է իր մեղավոր ընթացքը:**

**Տե՛ր հայր, որքա՞ն կարող է ողորմած, բարեգութ, սակայն արդարադատ Աստված հանդուրժել մեղավորի չարագործությունները կամ, առակի լեզվով ասելով, որքա՞ն կարող է փնտրել կորուսյալ, մեղավոր մարդուն՝ Իր «մոլորված ոչխարին»:**

- Քանի դեռ մարդն այս կյանքում է, Աստված դեռ հույս ունի եւ սպասում է նրա դարձին: Եվ ոչ թե ուղղակի սպասում է, այլ մշտապես այցելում է ցանկացած մեղավորի, փնտրում նրա դարձը, որովհետեւ բոլորին էլ Ինքն ստեղծեց: Սակայն երբ մարդն իր ողջ կյանքում այդպես էլ մնաց անզեղջ, մնաց թշնամական կեցվածքի մեջ, ապա իր համար այլեւս գթության պաշարն սպառվեց, ինքն սպառեց՝ իր իսկ չար ընտրությամբ: Դրա համար Քրիստոսն ասում է. «Երբ որ մարդու Որդին գա, այդ ժամանակ երկրի բոլոր ազգերը լացուկոծ պիտի անեն... բայց այլեւս ողորմություն չի լինելու» (տե՛ս Մատթ. ԻԴ 30, ԻԵ 31-45): Այնպես որ՝ Աստված ամեն ինչ արեց մարդու փրկության համար, Իր Սրբազան Որդուն զոհաբերեց մեզ՝ անարժաններիս համար: Մնաց մարդու ընտրությունը: Խե՛ղճ մարդ. ունի ազատ կամք եւ պիտի կողմնորոշվի... Բայց գոնե մեր ժողովրդի զավակների համար չպետք է այդքան դժվար լինի ճիշտ ընտրությունը: Ինչո՞ւ. որովհետեւ մեր նախահայրերն արյուն են տվել այդ սրբազան հավատքի համար, դարեր շարունակ Քրիստոսին խաչակից են եղել: Եղել են ա՛յն «կորուսյալ ոչխարը», որը երկրագնդի բոլոր ազգերի մեջ առաջինը դարձի եկավ՝ բարի օրինակ դառնալով մյուսների համար, այն մոլորյալը, որի գտնվելը պայմանավորված էր ոչ միայն Փնտրողի ջանքերով, այլեւ գտնվողի իմաստուն եւ խոնարհ կամեցողությամբ, վերջապես՝ այն գտնվածը, որն այլեւս ետ չնայեց, չխոտորվեց, չերերաց ու չկասկածեց, այլ հավատարիմ մնաց իր սրբազան հավատքին ու բոլորիս Արարչին՝ Ամենասուրբ Տիրոջ օրհնությամբ:

# ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ



*Սկիզբը՝ էջ 4*

*Երգերս,*
*Իմ երկիր,*
*Քո շաֆրանով ներկած,*
*Քո արեւով,*
*Տոթով,*
*Փողոցների ցեխով -*
*Փռել եմ դաշտերիդ*
*Հեռուներին չարքաշ,*
*Սիրտս զուռնա՛ շինել,*
*Գալիքների դհոլ...*

Ի՞նչ էր բանաստեղծի ուզածը. ա՛յն, որ չլինի հանկարծ՝ իր երկիրը դուրս մնա առաջընթացի թեեւ դժվարին, բայց անհրաժեշտ քայլերից: Ու դա է պատճառը, որ նա հաստատակամորեն շարունակում է պնդել, համոզել, հասկացնել.

*Հասկանո՞ւմ եք՝ հողմակոծ ու ժխոր*
*Օրերի գծերով երկաթե*
*Գնացքի նման մի դղորդ*
*Մոտենում է գալիքը թեժ:*
*...Պիտի գա՛... պիտի գա՛, պիտի գա՛*
*Երկաթի հզո՛ր զնգոցով -*
*Դեպի մեր խուղերը գորշաքար,*
*Դեպի մեր երկիրը քսոտ:*

Ստեղծագործական այս նոր կողմնորոշումը Չարենցին մղում էր ինքնավստահորեն ասելու. *«Պոեզոզուռնան» ես իմ միակ գիրքն եմ համարում եւ՝* ***առաջին*** գիրքը Տերյանից հետո»: Չարենցն իրավացի էր նաեւ այն առումով, որ բերում էր միանգամայն նոր պատկերներ, անսովոր համեմատություններ ու փոխաբերություններ, ինչպես, օրինակ, այս տողերում.

*Ինչ որ չի՛, չի՛ երազել*
*Դեռ ոչ մի պոետ աստղաբիբ.*
*Ուզո՞ւմ եք՝ որպես գնդասեղ*
*Արե՛ւը խրեմ փողկապիս,*
*Առնեմ, որպես սինի,*
*Երկինքը աստղերի խաղով -*
*Ու տանե՛մ այն հարսանիք,*
*Որպես միրգ մի ճութ խաղող:*

**«Երկիր Նաիրի»**: Իր ժողովրդի կյանքը նոր հուն մտցնելու ցանկությամբ Չարենցը գրեց նաեւ հայրենի քաղաքի՝ Կարսի վերջին տարիների պատմությանը նվիրված «Երկիր Նաիրի» վեպը: Կարսն այստեղ ե՛ւ իրական քաղաք է, ե՛ւ Հայաստանից հափշտակված հեռացող հայրենիքի խորհրդանշան: Գրվել է 1921-1924 թթ., 1922-1925 թթ. տպագրվել «Նորք» հանդեսում, 1926-ին՝ առանձին գրքով:

«Երկիր Նաիրին» բնույթով դրամատիկական եւ ողբերգական վեպ է՝ պարուրված երգիծանքի թեթեւ շղարշով: Դա մեծ հայրենասերի գիրք է՝ ինչպես Աբովյանի «Վերք ...»-ը:

Վեպի նյութն Առաջին աշխարհամարտն է, Հայաստանի պատմաքաղաքական կացությունը, ազատ, անկախ ու միացյալ հայրենիքի երազանքը, դրան հաջորդող ամոթալի ու ծանր պարտությունները եւ այդ ամենին ուղղված գրողի հայացքը՝ արտաքուստ թվացյալ երգիծական, ներքուստ՝ սիրտ կեղեքելու աստիճանի ողբերգական:

Ամեն ինչ սկիզբ է առնում առասպելական անցյալից: Դարեր շարունակ թանձրացած կարոտն իրական հայրենիք է որոնում, բայց մնում է անթափանց մշուշ: Դա անցյալում ժողովրդի փայփայած երազանքն է, որին հիմա փոխարինել է նորաստեղծ պետականությունը, եւ դա ոչ իբրեւ *«ուղեղային մորմոք»*, այլ՝ որպես իրական հայրենիք:

Վեպն սկսվում եւ ավարտվում է Կարս քաղաքի համայնապատկերի նկարագրությամբ: Բոլոր գործող անձանցով հանդերձ՝ վեպի գլխավոր «հերոսը» Կարսն է: Եվ պատահական չէ, որ շուրջ 60 նշանավոր ու աննշան կերպարներ ուրվագծելով՝ գրողը մեկ անգամ չէ, որ կրկնում է, թե իր վեպում հերոսներ չկան: Հերոսներ, իհարկե, կան, եւ այն էլ՝ ինչպիսի՛: Բայց Չարենցի հայեցակետն այնպիսին է, որ բոլոր հերոսներին ի մի է բերում քաղաքի պատմության մեջ:

Առաջին գլուխը վերնագրված է *«Քաղաքը եւ բնակիչները»*: Խորհրդավոր մոգականության հասնող մի ծիսակատարությամբ հեղինակը նկարագրում է իր հայրենի քաղաքը՝ Կարսի բերդը, Առաքելոց եկեղեցին, Վարդանի կամուրջը, Սլլան քարը, Ճգնավորի մատուռը: Հեքիաթն ու իրականությունը խառնվում են այնպիսի առասպելական պատմությունների մեջ, որ քաղաքի հիշյալ տեսարժան վայրերի նկարագրությամբ ասես երեւում է նախընթաց բոլոր սերունդների կյանքի ուղին՝ նրանց հավատալիքներով ու սովորույթներով: Հիշատակվում են նաեւ այլ հրաշքներ՝ երկաթգիծը, հինգ հարկանի շենքը, որտեղ *«մտնողի աչքերը... մթնում են սարսափից»*, եւ որտեղից ամեն ուղղությամբ տարածվում են *«վճիռներ ու ճակատագրեր»*, ասիական բաղնիքները:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ԻՆՔՆԱՏԻՊ ՈՒ ՏԿՔՈՒԿ ՄԻ ԱՇԽԱՐՀ

Վերջերս Գեղագիտության ազգային կենտրոնում բացվել էր մի ցուցահանդես, որն արվեստասեր հանրության համար իրավամբ հաճելի անակնկալ էր: Խոսքս վերաբերում է Արեգ Էլիբեկյանի գեղանկարչական գործերի ցուցադրությանը:

Երբ գնում էի ծանոթանալու Արեգ Էլիբեկյանի գործերին, փոքր-ինչ վախ ունեի, վախ, որ նա կարող էր զերծ չլինել իր մեծանուն հոր՝ Ռոբերտ Էլիբեկյանի ազդեցությունից: Սակայն իմ տեսադաշտում հայտնված առաջին իսկ գործերն անմիջապես ցրեցին մտահոգությունս: Իմ առջեւ միանգամայն ինքնատիպ, սեփական ոճ ու մտածելակերպ ունեցող մի նկարիչ է, ով անկեղծորեն ու անմիջականորեն փորձում է իր տեսածն ու ընկալածը կտավին հանձնել՝ առանց ավելորդ ու անհարկի էֆեկտների, պինդ ու ամուր ձեռագրով, գույն ու գծի խիստ ներդաշն ու հասուն լուծումներով, գեղարվեստական ընկալումների սեփական հայեցակարգով, կերպավորման ու արտահայտչամիջոցների որոնման ինքնուրույնությամբ՝ դույզն-ինչ չկրկնելով տարանդաշատ իր նախորդներից որեւէ մեկին:



Ծնվել է Երեւանում 1970 թվականին, 1992-ին ավարտել Երեւանի Գեղարվեստաթատերական ինստիտուտը: Դեռեւս ուսանողական տարիներից մասնակցել սկզբում երիտասարդական, ապա նաեւ հանրապետական ցուցահանդեսներին:

Ինստիտուտն ավարտելուց անմիջապես հետո մեկնել է Կանադա, այժմ ապրում, աշխատում եւ ստեղծագործում է Մոնրեալ քաղաքում: Ունի անհատական նկարչական ստուդիա, դասավանդում է նաեւ Մոնրեալի Գեղեցիկ արվեստների թանգարանում: 2004 թվականից պարբերաբար մասնակցել է Կանդայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի տարբեր քաղաքներում, ինչպես նաեւ Երեւանում կազմակերպված խմբակային ցուցահանդեսների, ունեցել անհատական ցուցահանդեսներ Մոնրեալում, Բեյրութում, Փարիզում, Անվերում (Բելգիա), Բրյուսելում, Երեւանում եւ այլ քաղաքներում:

Ասելիքը կենտրոնացնելով հիմնականում քաղաքային տեսարանների՝ իր գեղարվեստական ընկալումներին հարազատ դրվագների՝ մարդաշատ փողոցների, սրճարանների, բակերի, պուրակների վրա՝ նկարիչը ե՛ւ ընդհանրացնում է պատկերվածն ու երեւույթը, ե՛ւ անհատականացնում՝ երկու դեպքում էլ մնալով միանգամայն համոզիչ ու անկեղծ: Նրա այս կարգի գործերում ֆիգուրները, մեկտեղվելով հանդերձ, ունեն միանգամայն ինքնուրույն հնչեղություն. յուրաքանչյուրն իր ներսում ընդգծված անհատականության կրող է՝ իր հոգս ու ապրումի մեջ, առօրյա եռուզեռում վաղվա իր տեսլականին փարված: Մեծ քաղաքներին բնորոշ օտարոտի մթնոլորտը, մարդաշատությունն ու ուրբանիզացիան, շնորհիվ սառը ու տաք գույների ճշգրիտ ու ներդաշն համադրությունների, շնորհիվ ռիթմի հավասարակշիռ, բայց եւ ներքին լարվածությամբ շնչող հագեցվածության, նկարչի կտավներում դարձել են խիստ առինքնող՝ պահի ու ժամանակի դիպուկ արտահայտչական կնիքով, գեղարվեստական ինքնատիպ մեկնաբանությամբ, ճշգրիտ գտնված արտահայտչամիջոցների նուրբ ու հատու խաղերով, թանձր, բայց ամենեւին չճնշող, օդառատ գունային լուծումներով:





Արեգ Էլիբեկյանի արվեստում առանձնակի տեղ ունեն ջրային տարածքների վրա ձգվող քաղաքային կամուրջները: Այս գործերում գիծը, գույնը, երանգը չեն ճչում, չեն աղմկում, այլ հանդարտ ու մեղմաշշուկ սահում են կտավի մակերեսով եւ դիտողին ստիպում ընկղմվել խոհականի ու բանաստեղծականի՝ ներքին լույսով հագեցված հարուստ աշխարհը՝ հակադրության մեջ դնելով հոսող ջրի վայրկենական գունեբանգները կամրջի վրայով անցնող մարդկանց պլաստիկական ձեւերի, հեռվից երեւացող շենքերի ու շինությունների հակադարձումների հետ: Գունախաղերի համադրումներով ստեղծված վաղանցիկության ու մշտակայության այդ հոգեբանական շղթան Արեգի նախասիրած թեմաներից մեկին՝ կամուրջներին հաղորդում է զարմանալի հնչեղություն, ինչ-որ տեղ այլաբանական ու խորհրդանշական լիցքավորում: Չէ՞ որ կամուրջ հասկացությունը մի վիճակից մյուսին անցնելու փորձություն է, որտեղ գտածն ու կորցրածը որոշվում են այդ անցումն իրականացնելուց հետո: Այս փորձությունն Արեգը սքանչելիորեն հաղթահարել է ձեւերի էքսպրեսիվ լուծումներով, մարդու ու բնության արարչական քանքարի զուգորդումի միանգամայն յուրօրինակ մեկնաբանությամբ:

Նկարչի գործերն ամբողջությամբ առաջին հայացքից դիտողին գերում են իրենց զարմանալի խաղաղությամբ, զարմանալի այն անդորրով, որ հաճախ ստիպում է մարդուն կտրվել դարի, ժամանակի ու քաղաքների աղմկոտ ռիթմից եւ ըմբոշխնել մենության փիլիսոփայական ենթատեքստերի խոհն ու ապրումը, մարդու եւ բնության չմիջնորդավորված երկխոսությունն անցավորի ու անանցի մշտնջենական գոյակցության մտորումներում: Նրա պատկերներն ու կերպարներն ասես խոսում են իրենք իրենց հետ՝ լուռ ու անհանդորր: Բայց սա միայն առաջին հայացքից: Խորքում չափազանց խոսուն են՝ միայն առանց արտաքին ճնշման: Սա հոգեբանական մի մեթոդ է, երբ նկարիչը փորձում է դիտողին դարձնել պատկերի, տեսարանի գործող անձը՝ փոխանցելով նրան իր մտահղացման ներքին լարվածության նրբությունները, հույզերի ներքին, հոգեբանական տարանցումների ելեւէջները: Այս առումով խիստ շահեկան են նկարչի առավելապես ձմեռային եւ աշնանային բնապատկերները, որոնք կատարված են անմիջական տպավորության տակ: Այստեղ հետաքրքիր են այն զուգորդումներն ու հակադրությունները, որոնք առկա են կանադական, փարիզյան ու երեւանյան բնապատկերներում, ուր նկարիչը գունային նուրբ խաղերի միջոցով փորձել է մի կողմից շեշտել նմանությունները, մյուս կողմից՝ տարբերությունները, որոնք առանձնանում են շահեկան դիպուկությամբ:



Անշուշտ դժվար է թերթային այս փոքրիկ հոդվածում մանրազնին վերլուծել Արեգ Էլիբեկյանի արվեստի ողջ հենքն ու առանձնահատկությունները, ազդեցություններն ու նորամուծությունները, սակայն այն, ինչ կարող են հաստատապես փաստել, այն է, որ Էլիբեկյան գերդաստանը շարունակում է կերպարվեստում թողնել նոր ու վառ անուններ:

*Աստղիկ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ*

# Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

«Ս. Էջմիածնի երիտասարդներ» համախմբման անդամները շարունակում են իրենց ակտիվ գործունեությունը վիրտուալ աշխարհում՝ հատկապես Facebook սոցիալական եւ համախմբման www.surbejmiatsnieritasardner.webs.com կայքերում: Համախմբման անդամների ջանքերի շնորհիվ Wikipedia կայքում տեղադրվել են Ամենայն Հայոց Կաթողիկոսների կենսագրությունն ու գործունեությունը:

Facebook սոցիալական կայքի «Ս. Էջմիածնի երիտասարդներ» կայքէջում համախմբման ակտիվիստ անդամներն ստեղծել են տասնյակից ավելի խմբեր, որոնք ունեն հարյուրից ավելի անդամներ: Եվ յուրաքանչյուր խումբ ունի իր պատասխանատուն, ով հանդիսանում է այդ խմբի ադմինիստրատորը, որի պարտականությունն է հետեւել խմբի գործունեությանը: «Ս. Էջմիածնի երիտասարդներ» կայքէջի նման խմբերից է «Առակներ եւ աֆորիզմներ»-ը, որի ադմինիստրատորն է վերոհիշյալ համախմբման անդամ, ակտիվիստ Ռուբինա Մայիլյանը, ում նախաձեռնությամբ եւ ակտիվ գործունեության շնորհիվ է, որ «Ս. Էջմիածնի երիտասարդներ» կայքէջի հիմնադրման օրից մինչեւ այսօր շարունակում է գործել հիշյալ խումբը: Այժմ խումբն ունի մոտ ութ հարյուրից ավելի անդամ: Բացի Ռուբինա Մայիլյանից, «Առակներ եւ աֆորիզմներ» խմբում իրենց ակտիվությամբ աչքի են ընկնում «Ս. Էջմիածնի երիտասարդներ» համախմբման անդամներ Թինա Ղազարյանը, Հայա Գեւորգյանը, Արփի Հովհաննիսյանը, Անի Հովհաննիսյանը, Աստղիկ Թաթոսյանը, Արփինե Ավետիսյանը եւ շատ ու շատ այլ երիտասարդներ, ովքեր խմբում տեղադրում են կյանքից վերցված իմաստուն եւ բովանդակալից առակներ ու աֆորիզմներ եւ ակտիվորեն մասնակցում յուրաքանչյուր քննարկմանը:

«Առակներ ու աֆորիզմներ» խմբում ներառվում են ուսուցողական եւ բարոյախրատական առակներ ու աֆորիզմներ: Խմբի նպատակն է նման գրառումների միջոցով մարդկանց առիթ ընձեռել խորհելու եւ մի շարք հարցերի պատասխաններ գտնելու: Իմաստուն եւ բովանդակալից առակներն ու աֆորիզմներն օգնում են մարդկանց դասեր քաղել, իսկ բուռն քննարկումներն ու մտքերի փոխանակումը՝ խմբի անդամներին նոր բացահայտումներ անել:

«Ս. Էջմիածնի երիտասարդներ» կայքէջի մեկ այլ նշանավոր խմբերից է «Հայաստանի վանքերն ու եկեղեցիները», որը նույնպես համախմբման կայքէջի հիմնադրման օրից մինչեւ այսօր շարունակում է իր ակտիվ գործունեությունը: Այս խմբի ադմինիստրատորն է Արփինե Ավետիսյանը, ում ջանքերի շնորհիվ խումբը շարունակում է զարգանալ: «Հայաստանի վանքերն ու եկեղեցիները» խմբի անդամների թիվը հասնում է յոթ հարյուրի: Բացի Արփինեից, այս խմբում հետաքրքիր նյութեր են տեղադրում Ռուբինա Մայիլյանը, Սմբատ սրկ. Խանվելյանը, Անի Հովհաննիսյանը, Վարուժան սրկ. Հակոբյանն ու շատ ուրիշներ:

«Հայաստանի վանքերն ու եկեղեցիները» խմբի նպատակն է հնարավորինս տեղեկություն հաղորդել մեր հայրենիքում գտնվող վանքերի ու եկեղեցիների մասին՝ պատմական, աշխարհագրական, ճարտարապետական առումով եւ այլն, իսկ վանքերն ու եկեղեցիներն ավելի պատկերավոր դարձնելու համար տեղադրվում են նաեւ նրանց լուսանկարները:

Իր ակտիվությամբ ոչ մի խմբի չի զիջում նաեւ կայքէջի «Գեւորգյան հոգեւոր ճեմարան» խումբը, որի ադմինիստրատորն է Անի Հովհաննիսյանը, ում ուշադրությունից չի վրիպում եւ ոչ մի իրադարձություն, որը կապված է ընդհանրապես Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հետ: Այս խումբն ունի հինգ հարյուրից ավելի անդամ: Խմբի մի քանի ակտիվիստներ հրամցնում են նաեւ պատկերազարդ նյութեր:

«Ս. Էջմիածնի երիտասարդներ» համախմբման անդամների՝ վիրտուալ աշխարհում ակտիվ գործունեության շնորհիվ համացանցում լուրջ իրարանցում է նկատվում. նրանք կարողանում են իրենց շուրջը հավաքել եկեղեցասեր ու հայրենասեր երիտասարդների ու ծավալում են ակտիվ քարոզչություն: Անշուշտ, այդ քարոզչությունն իրականացվում է համախմբման անդամ հոգեւորականների առաջնորդությամբ, ովքեր նույնպես գրանցված են այդ կայքէջում ու սիրով պատասխանում են երիտասարդների բոլոր հարցերին:

***«Ս. Էջմիածնի երիտասարդներ» համախմբման մամլո դիվան***

# ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Սկիզբը՝ էջ 6

Քաղաքի կերպավորումով հանդերձ՝ ամենամեծ հրաշքը վեպի հերոսներն են՝ զարմանալի դիպուկ մականուններով: Ահա այդ պատկերաշարը հեղինակի բնութագրումներով. գեներալ Ալոշ՝ 80-ն անց պատկառելի մի նահրցի, Մարուքե Դրաստամատյան՝ ծխական դպրոցի ուսուցիչ, որին մեկ այլ հերոս, ոչ առանց որոշակի վերաբերմունքի, ասում է *Գրաստամատյան*, Մեռելի Ենոք, որը, տուն ու տեղ չունենալու պատճառով, քնում է իր պատրաստած դագաղների մեջ, ընկեր Վառոդյան՝ *«այսինքն Կենտրոնաուղեղասարդի Տեղական Կոմիտեն»*, պանդոկապան Բոչկա Նիկոլ, ամեն ինչից տեղեկություն ունեցող Տելեֆոն Սեթո, բժիշկ Սերգե Կասպարիչ… Եվ այդ բոլորի մեջ՝ «Լույս» նավթարդյունաբերական ընկերության ներկայացուցիչ, նաիրյան գործերի կառավարիչ Մազութի Համո կամ Համազասպ Աստվածատրյանը, որը դեպքերի բերումով դառնում է վեպի գլխավոր դեմքը: Խաղաղ կյանքով ապրում է քաղաքը մինչեւ 1914 թ., երբ սկսվում է համաշխարհային պատերազմը:

Երկրորդ գլուխը վերնագրված է *«Դեպի Նաիրի»*: Քաղաքում բոլորն արդեն կիսաձայն խոսում են պատերազմի մասին: Ոչ ոք չի համարձակվում բոլորին հայտնի նորությունն ասել բարձրաձայն: Միակը Համոն է: *«Պատերա՜զմ»*,- հայտարարում է նա եւ ժողովրդին մղում հերոսամարտի: Նրա կողքին են Վառոդյանը եւ Սերգե Կասպարիչը: Սրանց դեմ կանգնում եւ հայրենիքը փրկելու այլ ծրագրեր են առաջարկում Մարուքե Դրաստամատյանը, Կարո Դարայանը եւ օրիորդ Սաթոն՝ նրանք, ովքեր բոլշեւիկների ապազգային գաղափարներով բարոյալքեցին հայոց բանակը եւ, ի վերջո, անարգ թշնամուն հանձնեցին Կարսը: Բայց պատերազմը դեռ շարունակվում է: Նաիրյան ուժերով բեռնավոր



կրկին ռազմաճակատ են մեկնում գնացքները. հայ կամավորները գնում են դարավոր ոսոխից ազատագրելու ավետյաց երկիրը: Այդպես էլ վերնագրված է վեպի երրորդ եւ վերջին գլուխը՝ *«Երկիրը Նաիրի»*:

1917 թ. Ռուսաստանում սկսված հեղափոխությունն ամեն ինչ խառնում է իրար:

Ռուսական զորքերը լքում են ճակատը եւ հայ կամավորներին մեն-մենակ թողնում դարավոր ոսոխի դեմ: Դաշնակցական եւ բոլշեւիկյան միջկուսակցական պայքարը ջլատում է նաեւ հայոց զորքերի դիմադրությունը. հետեւանքը լինում է Կարսի անկումը:

Կարսի լքված բերդում Մազութի Համոն ողբում է նաիրյան զորքերի պարտությունը, բայց այլեւս ոչ ոք չէր փրկելու ո՛չ նրան, ո՛չ էլ Կարսը: Ոսոխն անցել էր սահմանը եւ շարունակում էր տարիներ առաջ սկսած նախճիրը: Մազութի Համոն եւ նրա հետ մնացած մի քանի հավատարիմ մարդիկ գերի են ընկնում: Մինչ Համոն ողբում էր պարտության ամոթից, թշնամին նրան կախաղան է հանում եւ գլխավերեւում ցուցանակ փակցնում՝ *«Մ. Հ. Ա. Ն.»*, որ նշանակում է՝ *Մազութի Համո Արքա Նաիրի*: Նույն կերպ Հիսուս Քրիստոսին խաչ հանողները Նրա գլխավերեւում համանման մի ցուցանակ փակցրին՝ *«Հիսուս Նազովրեցի Արքա Հրեից»*:

Դեպքերի ընթացքը թեեւ ավարտվում է, բայց վեպը դեռեւս շարունակվում է վերջաբանում, որտեղ Չարենցը որոնում է ժողովրդի եւ հայրենիքի պատմաքաղաքական ճակատագրի հաշտեցման եզրը, որպեսզի պատերազմի պատճառած ահավոր ողբերգություններից հետո գոնե մի կերպ հնարավոր լիներ ապրել այն հողի վրա, որ վաղնջական ժամանակներից մինչեւ այսօր կոչվում է Երկիր Նաիրի:

Չարենցի վեպում կա այսպիսի մի համեմատություն. *«Ձիերը, քարացած նիոբեների նման, տեղում մնացին»*: Վեպում Չարենցն ասես ի՛ր իսկ ակնարկած միոբեն լինի՝ հունական առասպելաբանությունից հայտնի, զավակներից զրկված մայրը՝ կերպարանափոխված արցունք թափող քարի: Ու թեեւ նա այդ արցունքների միջից երբեմն թախծաժպիտ հայացք է ուղղում մարդկանց, սակայն դա չի նշանակում, թե նա մոռացել է իր քաղաքի զավակների սպանդը:

«Երկիր Նաիրի» վեպը պատմաքաղաքական իրադարձությունների հավաստի վերարտադրության եւ գեղարվեստական բարձր վարպետության արտահայտություն է:

Չարենցը կարողացել է խտացնել 1910-ական թթ. հայ ժողովրդին պաշարած ճակատագրական իրողությունները, բացահայտել քաղաքական ուժերի գործունեությունը եւ պատկերել հայրենիքի իրական պատմությունը:

Գեղարվեստական առանձնահատկություններով «Երկիր Նաիրին» վեպի միանգամայն նոր տեսակ է: Նոր էին ե՛ւ պատումը, ե՛ւ ոճը, ե՛ւ լեզուն, ե՛ւ կառուցվածքը, ե՛ւ հերոսների կերպավորման արվեստը, ե՛ւ ամեն ինչ քաղաքի ընդհանուր ուրվանկարի մեջ միավորելու վարպետությունը:

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԸ...

Սկիզբը՝ էջ 5

Ուշագրավ է, որ խառնամուսնության խնդիրը միայն հայությանը հուզող հարց չէր եւ վերաբերում է շատ ժողովուրդների: Այսօր արդեն աշխարհի շատ երկրներում հունական, չինական, թուրքական… գաղութները ոչ միայն նման իրողությունների են տեղիք տալիս, այլեւ իրենց հերթին ազդում են տվյալ երկրների ժողովրդագրական կազմի վրա: Իհարկե, վերոհիշյալ գաղութները կազմավորվել են կամավոր, ոչ մի արտաքին ուժ նրանց չի ստիպել արտագաղթել, մինչդեռ հայ զանգվածները տարագրվել էին բռնի, վտարվել իրենց բնակավայրերից, որը ենթադրում էր հետդարձի արգելք, իսկ ապաստան տված երկիրը՝ ապրելու **մշտական** բնակավայր, որը այնպիսի մի փոքրաթիվ ազգի համար, ինչպիսին հայ ժողովուրդն է, հավասարազոր էր մահվան:

Շահնուրն իր վեպն անվանել է «սիրային վէպ», որ ունի «ազգայնական ուղղութիւն»: Այդ երկու գործոնները ձուլված են միմյանց, շաղկապված, մեկը մյուսով պայմանավորված: Ու թեեւ սիրո հարցում մեղավորներ չեն լինում, բայց Շահնուրն իր հերոսի սիրո զգացումը կործանաբեր է համարում, զգացումը, ո՛չ իրավունքը, քանի որ կազմվող ընտանիքը չի կարող հայեցի լինել, իսկ ծնվելիք երեխան՝ հայ:

Շահնուրի ահազանգը միայն արտաքին սփյուռքին չէր վերաբերում: Խոսելով իր վեպի մասին «Գրականութիւնեն անդին եւ այլուր» հոդվածում, նկատի ունենալով Խորհրդային Միությունում առկա ներքին սփյուռքը, նա գրել է. «Հոն շատ կային Նաթաշաներ, երբ տակաւին ոչ մէկ Նենէթ կամ Պրիճիթ մտած էին մեր ընտանիքներէն ներս»: Գրողը իրոք որ հստակ էր տեսնում, որ այս մեծ աշխարհում ամենուրեք կորչում ու հալվում է իր ժողովուրդը:

Կա՞ ելք այդ ամենից: Շահնուրն այդպիսի ելք իր վեպով չի մատնանշում, բայց գոյատեւման կռվաններ հուշում է, որ նախ՝ կայանում է, որքան էլ այդ զարմանալի թվա, հայոց վշտից ծնվող բողոքի մեջ, եւ ապա՝ աշխարհի ու մարդկանց չարիքի դեմ դիմադրության ոգու առկայության մեջ, իր ազգակցի նկատմամբ ***ավելի մեծ սիրո*** ու ազգային փրկության նկատմամբ ***ավելի մեծ հավատի*** մեջ: Այդ պարագաներում, ինչպես գրում է իր «Հարալեզներուն դաւաճանութիւնը» պատմվածքում, անպայման կգտնվի «… ընդարձակութիւնը խոպան դաշտերու, եւ անոնց մէջտեղ փոքրիկ տնակ մը, եւ տնակին մէջտեղ փոքրիկ օճախ մը, եւ օճախին մէջտեղ փոքրիկ կայծ մը»: Շահնուրյան գրականությունը հենց այդ լույսն ու հույսի կայծի ջատագովումն է եւ ուղղված է Երկիր մոլորակի վրա մարդկային լիարժեք կյանքի բացակայության դեմ, այսաշխարհային խեղված բարքերի դեմ, առհասարակ պատերազմների ու նախճիրների եւ ազգերի հարաբերությունների անբնական ընթացքի դեմ:

Վեպում երեք անգամ լսվում է ջութակի «հի՜ն, շատ հի՜ն» մեղեդին: Օտարացման ու նահանջի այդ տխուր նվագը իրենով մարմնավորում է ազգային ու մարդկային միայնության ու լքվածության իրողությունը: Բայց Շահնուրն իր վեպով միայն նահանջի մասին չէ, որ գրում է: Վեպը նաեւ ազգային ինքնավստահության ու վերելքի է տանում: Այդ վերելքի ու անկման մեջ է հենց այս աշխարհում իր տեղն ունեցող հայ ժողովրդի կյանքի իմաստը:

Շահան Շահնուրի այս վեպի գերմաներեն թարգմանությունը Սամվել Հովսափյանի կողմից գալիս է իր փոքրիկ լուման դնելու աշխարհի արդարության ու մարդու բարօրության ստեղծման այն շինությանը, որի կառուցողներից մեկն էլ գերմանական մեծ գրականությունն է:

***Արծրուն ԱՎԱԳՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԿԱ

Սկիզբը՝ էջ 5

Այսպիսով՝ նյութի առաջացումը՝ ֆոտոն-ֆոտոն փոխազդեցության ճանապարհով, հանձին պրոտոնների եւ էլեկտրոնների, ավարտվում է հիմնականում պայթյունից մեկ վայրկյան հետո: Այդ իսկ պատճառով Թեոֆրաստ Պարացելսը նշում է. «Այն, ինչ մի դարաշրջանում անվանվում է առեղծված, մեկ այլ դարաշրջանում դառնում է գիտական իմացություն»:

Տիեզերքի ոչ մի անկյունում մենք հիմա չունենք միլիարդին հասնող ջերմաստիճան: Նույնիսկ աստղերի կենտրոնում ջերմաստիճանը չի հասնում 100 միլիոնի: Ուստի Մեծ պայթյունից հետո անցած ամբողջ ժամանակամիջոցում՝ ներկա պահին եւ հեռավոր ապագայում, նյութի՝ պրոտոնների եւ էլեկտրոնների առաջացում տեղի չի ունեցել, չի ունենում եւ չի ունենա: Մեր տիեզերքում առկա ամբողջ նյութը մեկ ամբողջական արարի հետեւանք է:

Ապացուցելով ֆիզիկական աշխարհի արարված լինելու հանգամանքը՝ բնականաբար հաստատում ենք նրանից ավելի խորհրդավոր՝ աննյութական կամ հոգեղեն աշխարհի գոյությունը: Դրա վառ վկան են ակադեմիկոս Ֆոդիե Շիպունովի խոսքերը. «Մաթեմատիկորեն ապացուցված է, որ ֆիզիկական աշխարհից բացի՝ կա ավելի բարդ համակարգված ալիքային աշխարհ»:



Իսկ երբ փորձում ենք անդրադառնալ նյութական աշխարհի փոքրիկ բյուրեղին, որն Արարչի կամոք «հանձն առավ» կյանքի կրողը դառնալ եւ Երկիր կոչվել, փաստերն ավելի մատչելի եւ ակնառու են դառնում: Այս անգամ կենսաբանները, իսկ ավելի ստույգ՝ կենդանի օրգանիզմների բոլոր հատկանիշներն իրենց մեջ կրող գեների հետազոտությամբ զբաղվողները, զարմանում էին իրենց ուսումնասիրության արդյունքներից: Պարզվեց, որ մարդու օրգանիզմում եղած աննշան թվացող գեները կրում են իրենց մեջ համայն մարդկության ժառանգական ինֆորմացիան: Այս փաստն ապացուցվեց 20 տարի առաջ՝ Կալիֆոռնիայի համալսարանի մի խումբ գիտնականների ջանքերով, որոնց գլխավորում էր պրոֆեսոր Ալան Ուիլսոնը: Նրանք ուսումնասիրեցին բջջի օրգանոիդներից միտոքոնդրիումները, որոնք բջջի էներգետիկ կայաններն են: Միտոքոնդրիումները կարող են ժառանգվել միայն մայրական ձվաբջջից, ինչը թույլ է տալիս ուսումնասիրել մայրական կողմի բոլոր նախնիներին եւ հասնել մարդու հնագույն անցյալին:

Արդյունքներն ապշեցնող էին: Ապացուցվեց, որ աշխարհի բնակչությունը, որն այս պահին կազմում է մոտ 7 միլիարդ, սկիզբ է առել մեկ կնոջից:

Հաջորդ փուլում ուսումնասիրվեցին տղամարդու քրոմոսոմի միջուկի հատուկ կտրվածքները, որոնք անցնում են հորից որդուն: Հետազոտությունները շարունակվեցին այնքան, մինչեւ հասնեն համայն մարդկության նախահորը: Արդյունքները դարձյալ ապշեցուցիչ էին՝ բոլոր տղամարդկանց քրոմոսոմի միջուկի ակունքներում մեկ տղամարդ է: Այսինքն՝ ներկայումս ապրող, անցյալում եղած եւ ծնվելիք բոլոր մարդիկ առաջացել են մեկ տղամարդուց եւ մեկ կնոջից: Հազարամյակների խորքից Սուրբ Գիրքը գալիս է հաստատելու արդի գիտական փաստերը. Աստված Իր պատկերով ու նմանությամբ ստեղծեց մարդուն: Արու եւ էգ ստեղծեց նրանց:

Կենսաբանորեն հայտնի է, որ մարդու 12 կողերից տղամարդկանց ձախ վեցերորդ, այսինքն՝ ծփան կողի դրսի մեկ երրորդ հատվածը բացակայում է: Դրա համար էլ Սուրբ Գիրքն ասում է. «Եվ Տեր Աստված խոր քուն բերեց Ադամի վրա, եւ նա քնեց: Նրա կողի ոսկորներից մեկն առավ ու նրա տեղը միս լցրեց: Տեր Աստված կողի ոսկորից կին շինեց ու նրան Ադամի մոտ բերեց» (Ծննդոց Բ 21-22):

Այն, որ մարդը ոչ միայն կենսաբանական, այլեւ հոգեղեն էակ է, կասկածից դուրս է, քանի որ ցանկացած կենսաբան կհամաձայնի, որ բջիջը չի կարող մտածել, նրանում տեղի են ունենում միայն կենսաբանական, քիմիական եւ ֆիզիկական պրոցեսներ, իսկ մենք ամբողջությամբ կազմված ենք բջիջներից, սակայն մտածում ենք, հուզվում, եղածից ստեղծում նորը եւ խորհում ապագայի ու հավիտենության մասին: Ուրեմն՝ վեր ենք բոլոր երկրավորներից եւ ունակ՝ կառավարելու, կարգավորելու կենդանի եւ անկենդան բնությունը: Հիրավի, երբ Աստված արարեց մարդուն, ասաց. «Աճեցե՛ք եւ բազմացեք, լցրե՛ք երկիրը, տիրեցե՛ք դրան, իշխեցեք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների եւ երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա» (Ծննդոց Ա 28):

Ուրեմն՝ Աստծուց մեզ տրված իշխանությունը, որպես խոհեմ ծառաներ, իմաստնությամբ գործածենք եւ մեր բոլոր քայլերով նպաստենք մեզ խոնարհությամբ իր վրա կրող Երկիր մոլորակի փթթուն, մաքուր ու կենարար լինելուն՝ աղոթք հղելով առ Աստված, որ մտքով, խոսքով եւ գործով միշտ հաճո լինենք Նրան՝ ի փրկություն մեզ եւ ի փառս Քրիստոսի…

*Նաիրա ՊԵՊԱՆՅԱՆ*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
**web կայք՝**
**kh-tert.livejournal.com**
Ստոր. տպագր.
17.10.2011 թ.
**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**